

Տ Ա Ր Ե Կ Ա Ն Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒՆ

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի 2025 թվականի գիտության, մշտադիտարկման, զբոսաշրջության բաժնի աշխատանքների

«Դիլիջան» ազգային պարկ ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող գիտական ուսումնասիրություններն ուղղված են «Դիլիջան» ազգային պարկում բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, գենոֆոնդի ուսումնասիրմանն ու պահպանմանը:

«Դիլիջան» ազգային պարկի տարածքում անտառների ընդհանուր վիճակի ուսումնասիրություն

Կազմվել է արտակարգ իրավիճակներում և հրդեհների ժամանակ «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի արտակարգ արձագանքման պլանը:

2025 թվականի հունվարի 20-ից դեկտեմբերի 5-ն ընկած ժամանակահատվածում «Դիլիջան» ազգային պարկ»-ին հարակից համայնքների բնակչությանը տրամադրվել է անվճար թափուկ փայտանյութի օգտագործման 480 տոննա՝ 927 խմ ծավալով փայտանյութի համար:

«Դիլիջան տեղամաս» - մասնաճյուղի թիվ 10 և թիվ 5 պահաբաժիններում իրականացվել է քանատապալ, ձյունակոտոր սոճիների հաշվառում: Հաշվառվել է 49 ծառ՝ 27.9 խտխմ ծավալով, որից 9.33 խմ շինափայտ: Հաշվառված քանատապալ փայտանյութից «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի վարչական շենքի տարածք՝ ներքին պահեստ է տեղափոխվել սոճի տեսակի 6.83 խմ շինափայտ, 3,355 խմ տեխնոլոգիական փայտ և 4 խմ վառելափայտ:



«Դիլիջան տեղամաս» - մասնաճյուղի թիվ 1 պահաբաժնում իրականացվել է քամատապալ, ձյունակոտոր ծառերի հաշվառում: Հաշվառվել է 9 ծառ՝ 21.13 խտխմ ծավալով:

«Հաղարծին տեղամաս» - մասնաճյուղի թիվ 11 պահաբաժնում իրականացվել է քամատապալ, ձյունակոտոր ծառի հաշվառում: Հաշվառվել է 1 ծառ՝ 8.02 խտխմ ծավալով որը մթերվել և տեղափոխվել է ազգային պարկի վարչական շենքի տարածք՝ ներքին պահեստ և իրացվել:

«Գոշ տեղամաս» մ/ճ-ի 5-րդ պահաբաժնում իրականացվել է քամատապալ, ձյունակոտոր ծառի հաշվառում: Հաշվառվել է 2 ծառ՝ 3,2 խտխմ ծավալով(հաշվառված փայտանյութը տեղափոխվել է «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի վարչական շենքի տարածք):

Կազմվել են հաշվեգնահատման ցուցակները, հատատեղի անձնագրերը և անտառահատման տոմսերը:

ԲԷՑ-3-2023 պայմանագրի կատարման շրջանակներում «Հաղարծին տեղամաս» մ/ճ – ի 8-րդ պահաբաժնից «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի վարչական շենքի տարածք է տեղափոխվել 75 խմ իսկ «Հաղարծին տեղամաս» մ/ճ –ի տեղամասի ներքին պահեստ է տեղափոխվել 21 խմ վառելափայտ: ԲԷՑ-ի մնացորդ արողջ փայտանյութը տեղափոխված է և աշխատանքներն ավարտված են:

Իրականացվել է 2024 թվականի ընթացքում կազմված անտառահատման տոմսերով հաշվառված փայտանյութի մնացորդի հաշվարկ և տեղադիրքերի ճշգրտում՝ «Դիլիջան» ազգային պարկ»-ի 2025 թվականի գոտիավորման քարտեզների հետ համադրման նպատակով:

«Աղավնավանք տեղամաս» մ/ճ-ի թիվ 2 պահաբաժնի տնտեսական գոտում 2024 թվականին հաշվառված քամատապալ ծառերից առաջացած 16,16խտխմ ծավալով փայտանյութը սեզոնային աշխատակիցների կողմից մթերվել և տեղափոխվել է տեղամասի ներքին պահեստ:

Իրականացվել են «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ներքին պահեստ փայտանյութի հանձնման-ընդունման, պահեստից փայտանյութի բացթողման և համապատասխան փաստաթղթերի կազմման աշխատանքներ:

Կատարվել են «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքներում բռնկված հրդեհների հրդեհաշիջման աշխատանքներ, հրդեհների զբաղեցրած տարածքների տեղազննման և չափագրման աշխատանքներ:

Էկոպարեկային ծառայության աշխատակիցների հետ համատեղ իրականացվել են շրջայցեր ազգային պարկի բոլոր տեղամաս մասնաճյուղերում, կատարվել են տարածքների և տեղադիրքերի ճշգրտման աշխատանքներ: Մինչ 2025 թվականի դեկտեմբերի 11-ը Էկոպարեկային ծառայության աշխատակիցների կողմից կազմվել է 120 անտառոխախտման արձանագրություն, որից 21-ը հրդեհի վերաբերյալ՝ 971,55 հա, 1-ը ազգային պարկի տարածքում կենցաղային աղբի ապօրինի թափման, 3-ը տեղում ի պահ տրված փայտանյութի գողության, 5-ը տարաբնույթ ապօրինի հողային աշխատանքների և 90-ը ապօրինի ծառահատման վերաբերյալ՝ 1056 ծառ 58 ճյուղ 862,113 խտխմ ծավալով:

Մասնակցություն «Կենսաբազմազանության պահպանության համատեքստում վավերացված միջազգային կոնվենցիաների և համաձայնագրերի ինչպես նաև կենսաբազմազանության պահպանությանն ուղղված մեթոդների և մոտեցումների» վերաբերյալ դասընթացին:


ՀԷՑ-ի տարբեր մասնաճյուղերի աշխատակիցների հետ շրջայցեր են իրականացվել ազգային պարկի տարածքներում էլեկտրական օդային գծերի բնականոն աշխատանքին խանգարող ծառերի հնարավոր հատման և էտման աշխատանքների իրականացման համար նախնական ուսումնասիրություններ նպատակով:

ԴԱՊ-ի կենսաբազմազանության բազայի տվյալների, շարունակական հավաքագրման / թարմացման աշխատանքներ

Կենսաբազմազանության տվյալների բազայում բույսերի տեսակային կազմի և դրանց աճելավայրերի գրանցման նպատակով 2025 թվականի ընթացքում հավաքագրվել են նյութեր: Բազայում կենդանիների վերաբերյալ տվյալները գրանցվել են տեղամաս – մասնաճյուղում կենդանիների հետքերի վերաբերյալ աշխատակիցների կողմից հավաքագրված և տեղադրված ֆոտոթակարդների տվյալների համաձայն: Բազայի տվյալները պարբերաբար թարմացվում են ԴԱՊ-ի տարածքում գիտական բաժնի և ՆԱԲՈւ միջազգային կամակերպության կողմից տեղադրված ֆոտոթակարդների արդյունքները մշակելուց հետո:

Բազայում հաշվետու ժամանակահատվածում գրանցվել է 664 բուսատեսակ 62 սնկեր, 258 անուն կենդանի, որոնք պատկանում են հետևյալ ընտանիքների.

1. Երկկճղակավորների կարգ՝
 - Եղջերուների ընտանիք՝ այծյամ
2. Գիշատիչների կարգ՝
 - Արջերի ընտանիք՝ գորշ արջ
 - Շնագզիների ընտանիք՝ աղվես, գայլ, շնագայլ
 - Կատվազգիների ընտանիք՝ անտառային կատու
 - Կզաքիսազգիներ՝ աքիս, կզաքիս, գորշուկ
3. Նապաստականմանների ընտանիք՝ շեկ նապաստակ
4. Կրծողների կարգ՝ սկյուռ
5. Թռչուններ






«Դիլիջան» ազգային պարկի կենդանական աշխարհի տեղաշարժի, ուսումնասիրություն և տվյալների վերլուծություն:

«Դիլիջան» ազգային պարկում կենդանական աշխարհի տեղաշարժի ուսումնասիրության իրականացման նպատակով հավաքագրվել են նյութեր, ազգային պարկի տարբեր հատվածներում իրականացվել է կենդանական աշխարհի դիտարկման և ֆոտոթակարդների տեղադրման աշխատանքներ: 2025 թվականի ընթացքում ԴԱՊ-ի բոլոր տեղամասերում տեղադրվել են ֆոտոթակարդներ, որոնց հավաքագրված տվյալները գրանցվել են բազայում: Ինչպես նաև ուսումնասիրությունների իրականացման նպատակով սահմանվել է դիտարկման ցանց, որը ներառում է մշտական և ժամանակավոր


(սեզոնային) դիտակետեր, երթուղիներ՝ դիտարկումների, ստուգայցերի, երթուղային հետազոտությունների և ուսումնասիրությունների անցկացման համար:



Հաշվետու ժամանակահատվածում գրանցվել են հիմնականում այծյամներ, անտառային կատու, գորշուկ, վայրենակերպ, կզաքիսներ, աղվեսներ: ԴԱՊ-ի տարածքում վերջին մեկ տարվա ընթացքում ավելացել է արջերի, այծյամների և մացառախոզերի թվաքանակը՝ հիմնականում հանդիպում են առանձնյակների կամ 2-5 կենդանուց կազմված խմբերով: Ներկայացված տվյալները հետազայում ենթակա են փոփոխության, քանի որ NABU հայաստանյան մասնաճյուղի համագործակցության շրջանակներում, ցանցային եղանակով տեղադրված ֆոտոթակարդների արդյունքները դեռևս կազմակերպությանը տրամադրված չեն:




2025թվականի ընթացքում և առհասարակ վերջին 1 տարվա ընթացքում նկատվել է վայրի խոզի /*Sus scrofa*/ թվաքանակի կրճատում՝ հիմնականում հանդիպում է «Գոշ տեղամաս» մասանճյուղում: Կենդանական աշխարհի դիտարկման ընթացքում առավել հաճախ գրանցվում է աքիսը /*Mustela nivalis*/, քարակզաքիսը /*Martes foina*/, աղվեսը /*Vulpes vulpes*/ և 2025 թվականի ընթացքում առավել հաճախ գրանցվել են գորշուկը /*Meles meles*/ և ՀՀ Կենդանիների Կարմիր գրքում գրանցված հնդկական վայրենակերպ կամ մացառախոզը (*Hystrix indica*): Բավականին լայն տարածվածություն ունեն սկյուռները /*Sciurus persicus*/, որոնց մեծ թվաքանակ գրանցվում է եղջերուների կենտրոնի հարակից տարածքում, ինչն էլ պայմանավորված է կերային բազայի առատության հետ: Կատարվել է 2020-2025 թվականների ընթացքում գրանցված արջերի թվաքանակի վերլուծություն և կազմվել է համեմատական դիագրամ, համաձայն որի 2025 թվականին արջերի թիվը կազմում է 51:



«Դիլիջան» ազգային պարկում եվրոպական այծյամների (*Capreolus capreolus*) գլխաքանակի ուսումնասիրության իրականացման համար հավաքագրվել են նյութեր, իրականացվում է տեսակի կետային և երթուղային ուսումնասիրություն, տեղադրվել են ֆոտոթակարդներ: Բազայում այծյամները գրանցվել են առկա կենսագործունեության հետքերի, նստատեղերի, մազահետքերի վերաբերյալ հավաքագրված տվյալների համաձայն: 2025 թվականի ընթացքում գրանցվել է 113 առանձնյակ: Կատարվել է 2020-2025

թվականների ընթացքում գրանցված այծյամների թվաքանակի վերլուծություն և կազմվել է համեմատական դիագրամ:



«Դիլիջան» ազգային պարկի տարածքում ինվազիվ և էքսպանսիվ բուսատեսակների ուսումնասիրություն

2025 թվականի ընթացքում տեղեկատվություն է հավաքագրվել ԴԱՊ-ի, ինվազիվ և էքսպանսիվ բուսատեսակների տեսակային կազմի վերաբերյալ: Նյութեր են հավաքագրվել վերոնշյալ բուսատեսակների հնարավոր աճելավայրերի, տեսակային առանձնահատկությունների, վեգետացիոն շրջանների վերաբերյալ: Հաշվետու ժամանակահատվածում, նախապես ընտրված տարածքում ուսումնասիրությունների իրականացման նպատակով կազմակերպվել են շրջայցեր, դիտայցեր, կատարվել է բուսատեսակների վիզուալ գննում, լուսանկարում, տեղադրվել են կետային փորձահրապարակներ /1x10 կամ 3x3/, տվյալների հավաքագրում: Յուրաքանչյուր բուսատեսակի աճի և զարգացման տարբեր փուլերում հաջորդ տարվա ընթացքում ևս

շարունակական կիրականացվեն ուսումնասիրություններ և դիտարկումներ դրանց աճելավայրերի, պոպուլիացիաների ընդհանուր վիճակի վերաբերյալ:

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրությունների ժամանակ, որպես թիրախային տեսակներ ընտրվել են առավել շատ տարածված 7 տեսակ ինվազիվ բույսեր, հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրանք նախկին տարիների ընթացքում ազգային պարկի տարածքում առավել հաճախ են գրանցվել և համարվում են ագրեսիվ կամ սակավ ագրեսիվ տեսակներ: Դրանք են՝

- ✓ Տատասկ ալեհեր (*Cirsium incanum*),
- ✓ Կոնիզա կանադական (*Conyza canadensis*)
- ✓ Ամբրոզիա օշինդրատերև (*Ambrosia artemisiifolia.*),
- ✓ Բալդրդան Սասնովսկու (*Heracleum sosnowskii*)
- ✓ Կտուցախոտ արևելյան (*Rhynchosyris orientalis*)
- ✓ Կեղծ դանձլամեր սպիտակ (*Veratrum album*)
- ✓ Սպիտակաձաղիկ սովորական (*Leucanthemum vulgare*)

2025 թվականի ընթացքում իրականացվել են շրջայցեր, կատարվել է վերոնշյալ տեսակների ընդհանուր ուսումնասիրություն, որի շրջանակներում տեղեկատվություն է հավաքագրվել ինվազիվ տեսակների տարածվածության, աճելավայրերի, էկոհամակարգերի վրա դրանց ազդեցության և ընդհանուր վիճակի վերաբերյալ:

Տատասկ ալեհեր (*Cirsium incanum*) տեսակը համեմատաբար շատ թվաքնակով գրանցվել է «Դիլիջան տեղամաս» մասնաճյուղ, 1,2,4 քառակուսիներում: Ինվազիվ բուսատեսակն աճում է անտառ տանող ճանապարհի երկու կողմերում՝ ճամփեզրերին, սակայն ավելի խոր տարածքներ չի ներթափանցում: Պատահականության սկզբունքով ընտրված հատվածներում միջինում 1 քմ-ի վրա կան 6-10 առանձնյակ: Տեսակի տարածվածությունը հատկապես նկատելի համեմատաբար շատ է այն հատվածներում, որտեղ շատ են զբոսաշրջիկների հոսքը: Տատասկ ալեհեր (*Cirsium incanum*) տեսակը բավականին հաճախ և բավականին մեծ կուտակումներով գրանցվում է մարգագետնային հատվածներում, որտեղ էլ գերաճող բնույթ ունենալով՝ մեծացնում է մոնոդոմինանտ զանգվածների ձևավորման վտանգը: Այսպիսով, խաթարվում է խոտաբույսերի բազմազանությունը, նվազում է մարգագետնային էկոհամակարգերի կայունությունը: Տեսակի տարածման ինտենսիվացման համար մեկ այլ նպաստավոր գործոն է համարվում

կլիմայի փոփոխությունը, որը հանգեցնում է բնական էկոհամակարգերի փոփոխության և նոր էկոլոգիական խորշեր է ստեղծում այս տեսակի համար: Ազգային պարկի տարածքում սակայն դեռևս Տատասկ ալեհեր (*Cirsium incanum*) տեսակի բնական էկոհամակարգեր ինտենսիվ ներթափանցման, ագրեսիվ վարքագծի դրսևորման դեպքեր չեն գրանցվել:



Կոնիզա կանադական (*Conyza canadensis*) տեսակը գրանցվել է «Հաղարծին տեղամաս» մասնաճյուղ, 35 քառակուսում /N40°45'19,13", E44°56'53,47"/: Ինվազիվ բուսատեսակն աճում է անտառ տանող ճանապարհի երկու կողմերում՝ ճամփեզրերին և լայն տարածում չունի: Կոնիզա կանադական տեսակի արագ, հեշտ բազմացման, տարածման տարբեր եղանակների, էկոլոգիական ճկունության, տարբեր գործոնների նկատմամբ կայունության, ալելոպատիկ, թունավոր հատկությունների և հատկանիշների առկայությունը կարող է բարենպաստ դառնալ նրանց ինտենսիվ տարածման համար՝ ազգային պարկի տարածքում, որի պատճառով էլ ներթափանցելով բնական էկոհամակարգեր, կարող են լիովին փոխել դրանք և որպես հետևանք հանգեցնել կենսաբազմազանության և հազվագյուտ էկոհամակարգերի կորստի : Տեսակը բավականին արագ ներխուժում է խախտված տարածքներ անտառմիջյան ճանապարհներ, ծառահատված տարածքներ և գրավում է ազատ տարածքները՝ թույլ չտալով տեղական բույսերի վերականգնումը:



Ինվազիվ տեսակներից ազգային պարկի տարածքում համամենատարբար շատ տարածված է Ամբրոզիա օշինդրատերև (*Ambrosia artemisiifolia*.) տեսակը՝ հատկապես

Աղավնավանք և Գոշ տեղամաս մասնաճյուղերում: Ինվազիվ տեսակը հիմնականում նկատվում է անտառ բարձրացող ճանապարհների եզրերին, հիմնականում Աղստև և Գետիկ գետերի երկայնքով: Ամբրոզիա օշինդրատերև (*Ambrosia artemisiifolia*.) տեսակն ունի շատ բարձր սերմնային վերարտադրողականություն՝ 1 բույսից միջինում ստացվում է մոտ 4000 սերմ, սակայն կարող է հասնել 32000-ի: Սերմերը պահում են ծրունակությունը մինչև 40 տարի: Շատ պահանջկոտ չեն, սակայն նախընտրում են խոնավ, ջրի հեշտ հասանելիությամբ վայրեր: Նշված վերջին հատկությունների շնորհիվ էլ ազգային պարկի տարածքում տեսակը կարող է հետագայում մեծ խնդիրներ առաջացնել և վնաս հասցնել բնական էկոհամակարգերին՝ նվազեցնում է դաշտային բուսականությունը և խաթարում է խոտաբույսերի բազմազանությունը: Մարգագետիններում բավականին արագ դուրս է մղում արժեքավոր ծաղկաբույսերը:



2025 թվականի ընթացքում կատարված շրջայցերի ժամանակ նկատվել է, որ բոլոր տեղամաս մասնաճյուղերում հաճախակի հանդիպում է Բալդրդան Սասնովսկու (*Heracleum sosnowskii*) ինվազիվ տեսակը: Այս տարվա ընթացքում համամենատաժ նախկին 2 տարիների առանձնյակների թիվը բավականի շատ է հատկապես մարգագետնային հատվածներում և գետաբերաններին: Հարկ է նշել, որ ինվազիվ տեսակը հաճախակի հանդիպում է

էկոզբոսաշրջային երթուղիների ամբողջ երկայնքով, ինչն էլ վտանգավոր է հատկապես ակտիվ զբոսաշրջային ժամանակահատվածում, պայմանավորված բույսի մոտ ֆոտոտոքսիկ հյուսի առկայությամբ, որն էլ առաջացնում է մաշկային վնասվածքներ: Հայտնվելով տարածքում տեսակը ստեղծում է խիտ թփուտներ և խնդիր է առաջացնում մյուս բուսատեսակների կամ ծառերի սածիլների աճի և զարգացման համար: Իսկ մարգագետիններում, բացատներում խախտում է էկոհամակարգային հավասարակշռությունը և միատարր զանգվածների ձևավորման հետևանքով մարգագետինները մոնոկուլտուրացման են գնում:

էքսպանսիվ (տեղական, բայց գերաճող) բուսատեսակների տարածման հետևանքով ազգային պարկի տարածքում դեռևս բնական էկոհամակարգերի կայունության խախտման դեպքեր դեռևս չեն գրանցվել, սակայն կարևոր է նշել այն փաստը, որ կան տեսակներ որոնք առավել հաճախ են հանդիպում ազգային պարկի տարբեր հատվածներում: «Դիլիջան» ազգային պարկում առավել լայն տարածում ունեն հետևյալ էքսպանսիվ տեսակները՝

- ✓ Կտուցախոտ արևելյան (*Rhynchospora orientalis*)
- ✓ Կեղծ դանձլամեր սպիտակ (*Veratrum album*)
- ✓ Սպիտակաձաղիկ սովորական (*Leucanthemum vulgare*)

Կտուցախոտ արևելյան (*Rhynchospora orientalis*) տեսակը ազգային պարկի որոշ հատվածներում հատկապես Հաղարծին, Դիլիջան և Շամախյան տեղամաս մասնաճյուղերում ցուցաբերում է էքսպանսիվ բնույթ և կարող է խիտ ծածկույթներ կազմել և ճնշել փոքրաչափ խոտաբույսերին: Կեղծ դանձլամեր սպիտակ (*Veratrum album*) տեսակը առավել հաճախ հանդիպում է Դիլիջան տեղամաս մասնաճյուղի 45 քառակուսում , ինչպես նաև այլ բարձրադիր հատվածներում: Սպիտակաձաղիկ սովորական (*Leucanthemum vulgare*) տեսակը տարածված է գրեթե ամենուր և արագ զբաղեցնում է մարգագետինները՝ խախտելով բնական բուսական հավասարակշռությունը: Սակայն հարկ է նշել, որ վերջինս գերաճելով մարգագետիններում՝ առաջացնում է մոնոդոմինանտ գորգեր: Իսկ նման «գորգային» զանգվածները խոչընդոտում են խոտաբույսերի այլ տեսակների աճին և սերմնաբաշխմանը:



«Դիլիջան» ազգային պարկի տարբեր էկոհամակարգերից 40 անուն բուսատեսակներից հերբարիումների պատրաստում

«Դիլիջան» ազգային պարկի բոլոր տեղամաս-մասնաճյուղերում իրականացված շրջայցերի, ուսումնասիրությունների ընթացքում, իրականացվել է բուսատեսակների զանազանման, լուսանկարման, հավաքման, չորացման, հերբարիումների պատրաստման աշխատանքներ՝ դրանք որպես դիդակտիկ նյութեր օգտագործելու նպատակով: Դաշտային շրջայցերի, բույսերի մոնիթորինգի իրականացման շրջանակներում 2025 թվականի ընթացքում հերբարիումների պատրաստման նպատակով, հավաքվել են բուսատեսակներ և պատրաստվել 40 անուն բույսերի հերբարիումներ:





Թեյերի և թուրմերի համար օգտագործվող բուսատեսակների հավաքում և փաթեթավորում

Դիտայցերի, շրջայցերի ժամանակ բոլոր տեղամաս – մասնաճյուղերից ըստ բույսերի օգտագործման ճիշտ ժամանակահատվածի 2025 թվականի ընթացքում հավաքվել, տեսակավորվել, չորացվել և փաթեթավորվել են թեյերի, թուրմերի պատրաստման համար օգտագործվող՝ տարբեր հատկություններ ունեցող բուսատեսակներ: Հաշվետու ժամանակահատվածում փաթեթավորվել է ընդհանուր թվով 140 տուփ թեյ:

Հավաքված բուսատեսակներն են՝

1. *Mentha longifolia* – Դաղձ երկարատերև
2. *Thymus collinus* – Ուրց բլրակային
3. *Hypericum perforatum* - Սրոհունդ խոցված
4. *Cephalaria gigantea* – Զիվան հսկայական
5. *Oreganum vulgare* – Խնկածաղիկ սովորական
6. *Rosa* – մասուր





«Դիլիջան» ազգային պարկի կենսաբազմազանության վերաբերյալ դեկուպաժի տեխնիկայով պատրաստված ուղեցույց-էթիկետկաների տպագրություն

Հաշվետու ժամանակահատվածում «Դիլիջան» ազգային պարկում կենսաբազմազանության ճանաչողական ուղեցույցի պատրաստման և տպագրման նպատակով պարկի բոլոր տեղամաս-մասնաճյուղերում իրականացվել են ուսումնասիրական շրջայցեր և դիտարկումներ: Դրանց ընթացքում կատարվել է բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների լուսանկարում, ինչպես նաև մշակվել է յուրաքանչյուրի վերաբերյալ հակիրճ տեղեկատվական նյութ: Արդյունքում տպագրվել է 50 օրինակ ճանաչողական ուղեցույց-էթիկետկա, որոնցից յուրաքանչյուրը ներառում է 60

թերթիկ: Ուղեցույցն իրենից ներկայացնում է գիտաճանաչողական նյութ, որը նախատեսվում է օգտագործել կոնֆերանսների, հանդիպումների, ցուցահանդեսների, դասընթացների, միջոցառումների ժամանակ, ինչպես նաև զբոսաշրջիկներին տեղեկատվության տրամադրման նպատակով:



«Դիլիջան» ազգային պարկում Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների տարածվածությունն ու ընդհանուր վիճակը

«Դիլիջան» ազգային պարկում հանդիպող Կարմիր գրքում գրանցված և պահպանության հատուկ կարիք ունեցող բուսատեսակներից 2025 թվականի ընթացքում կատարված դիտայց-շրջայցերի ժամանակ հատուկ ուշադրություն է դարձվել հետևյալ տեսակներին՝

- ✓ Հողմածաղիկ/վարդակակաչ գորտնուկային (*Anemone ranunculoides*),
- ✓ Եղբորոսին կարմիր (*Cephalanthera rubra*),
- ✓ Շուշան հայկական (*Lilium armenum*)
- ✓ Արքայածաղիկ բլրակային (*Fritillaria collina*)



Վերոնշյալ կարմիր գրքային տեսակների էկոլոգիական դերը մեծ է, քանի որ նրանք ոչ միայն պահպանում են կենսաբազմազանության հավասարակշռությունը, այլ նաև կարևոր են գիտական, գեղագիտական և կրթական առումով: Տեղամաս մասնաճյուղերում իրականացված շրջայցերի ժամանակ դիտարկումներ են իրականացվել յուրաքանչյուր տեսակի տարածվածության և նրանց պոպուլյացիաների ընդհանուր վիճակի վերաբերյալ: Վերոնշյալ տեսակներից առավել հաճախ հանդիպում է Վարդակակաչ փնջածն (Anemone fasciculata) տեսակը, որը տարածված է բաց անտառային եզրերում, թփուտներում և լեռնոտ գոտիներում: Հիմնականում հանդիպում է փոքր խմբերի տեսքով, պոպուլյացիաների վիճակը համեմատաբար կայուն է: Տեսակին սպառնող վտանգները հիմնականում կապված են անտառային էկոհամակարգերի խախտման և զբոսաշրջային ճնշման հետ: Տեսակը տարբեր խմբաքանակներով գրանցվել է Գոշ, Աղավնավանք, Հաղարծին տեղամաս մասնաճյուղերում:



Եղբորոսին կարմիր (*Cephalanthera rubra*) տեսակը սնկերի հետ միկորիզային կապ ունեցող հազվագյուտ խոլորձազգի է, որը ազգային պարկի տարածքում հանդիպում է հիմնականում ստվերոտ, խոնավ անտառներում: Հանդիպում է փոքրաքանակ կուտակումներով, կախված եղանակային պայմաններից ծաղկման շրջանը կարող է տատանվել մայիսի վերջից մինչև հուլիսի սկիզբ: Հիմնականում համեմատական մեծ թվաքանակով հանդիպում է Գոշ լճի մերձակայքում, սակայն տեղանքում զբոսաշրջային ազդեցության հետևանքով տեսակի պոպուլյացիայի կայունությունը որոշակիորեն խախտվում է:



Շուշան հայկական (*Lilium armenum*) աճում է մարգագետնային և բաց անտառային տարածքներում: Վերջին տարիներին պոպուլյացիաները համեմատաբար լավ վիճակում են: Հանդիպում է բավականին մեծ կուտակումներով և ունենում է տեղանքում լայն տարածմամբ: Մեկ բույսի մոտ ծաղիկների թիվը տատանվում է 3-5 ի սահմաններում կան առանձին դեպքեր երբ ծաղիկների թիվը հասնում է մինչև 11 հատի: Վերջի 3 տարիների ընթացքում գրանցվում է Դիլիջան տեղամաս մասնաճյուղի 45 քառակուսում՝ լավ վիճակում:



Շամախյան տեղամաս մասնաճյուղի 1 քառակուսում 2025 թվականի հունիս ամսվա սկզբին գրանցվել է Արքայաձաղիկ բլրակային (*Fritillaria collina*) տեսակը, որի պոպուլյացիայի ընդհանուր վիճակը գնահատվում է նորմալ՝ բնական վերարտադրությունը բավարար է: Վտանգները հիմնականում կապված են կենսավայրերի աղքատացման և հողի փոփոխությունների հետ:





Վերոհիշյալ տեսակների պոպուլյացիաները «Դիլիջան» ազգային պարկում ընդհանուր առմամբ լավ վիճակում են, դրանք ունեն բնական վերարտադրության կայուն ցուցանիշներ: Կարմիր գրքային տեսակների վրա հնարավոր բացասական ազդեցության հիմնական պատճառները կարող են լինել՝

- ✓ անտառային էկոհամակարգերի խախտումը (հատումներ, հրդեհներ),
- ✓ հողի էրոզիան,
- ✓ ծաղիկների անօրինական հավաքում և զբոսաշրջային ճնշումը:

«Դիլիջան» ազգային պարկում, «Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքներում բույսերի բազմազանության մոնիթորինգ» հնգամյա ծրագրի շրջանակներում իրականացված մշտադիտարկման աշխատանքներ

«Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքներում բույսերի բազմազանության մոնիթորինգ» հնգամյա ծրագրի շրջանակներում, 2023 թվականից «Դիլիջան» ազգային պարկի տարածքում մեկնարկվել է բուսական կենսաբազմազանության մշտադիտարկում: Մշտադիտարկման շրջանակներում անհրաժեշտ տվյալների հավաքագրման նպատակով ազգային պարկի բոլոր տեղամաս-մասնաճյուղերում կատարվել են ուսումնասիրություններ, տեղադրվել են ընդհանուր թվով 65 հատ մշտական փորձահրապարակներ /3x3մ, 1x1մ, 10x1մ չափերի/: 2023 թվականի ընթացքում փորձահրապարակներում դիտարկումներ իրականացվել են ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաջյանի անվան Բուսաբանության ինստիտուտի աշխատակիցների կողմից՝ ազգային պարկի գիտական բաժնի աշխատակիցների հետ համատեղ: 2024 թվականի ընթացքում փորձահրապարակների ուսումնասիրություն և փոփոխություն իրականացվել է Բուսաբանության ինստիտուտի աշխատակիցների կողմից: 2025 թվականի հունիսի 6-ին ծրագրի փորձագետներ Գեորգի Ֆայվուշ և Ար. Էլբակյանի կողմից ԴԱԴ-ի գիտական բաժնի

աշխատակիցների համար մեկօրյա ձևաչափով իրականացվել է դասընթաց, որի շրջանակներում ներկայացվել է մշտադիտարկման մեթոդաբանությունը, ԴԱՊ-ի տարածքում տեղադրված փորձահրապարակները, ընտրված բուսատեսակները, դաշտային աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ գործիքակազմն, այդ թվում՝ կիրառվելիք Arcgis Survey 123 հավելվածը:



1. Հազվագյուտ և անհետացող տեսակների մշտադիտարկման համար տեղադրվել են 3X3մ փորձահրապարակներ: Որտեղ A1, C1, A3, C3 ենթափորձահրապարակներում կատարվում է ցուցիչ տեսակի առանձնյակների քանակի հաշվարկ, իսկ B2 ենթափորձահրապարակում ընդհանուր հանդիպող բոլոր տեսակների թվի հաշվարկ: Որպես թիրախային տեսակներ ընտրվել են *Anemone ranunculoides* / Վարդակակաչ գորտնուկայինը/ և *Taxus baccata* / Կենի հատապտղայինը/: Հազվագյուտ և անհետացող տեսակների համար տեղադրվել են հետևյալ փորձահրապարակները՝ R1, R6, R5, R9, R3, R2, , R4,

	A (1մ)	B (1մ)	C (1մ)
1 (1մ)			
2 (1մ)			
3 (1մ)			

Վերոնշյալ փորձահրապարակում ուսումնասիրություններ իրականացվել են հունիսից-օգոստոսն ընկած ժամանակահատվածում, որոնց վերաբերյալ տեղեկատվությունը հավաքագրվ է Arcgis Survey 123 հավելվածում:

R2 փորձահրապարակ – Գտնվում է Աղավնավանք տեղամաս մասնաճյուղում: Մշտադիտարկումն իրականացվել է Բուսաբանության ինստիտուտի աշխատակիցների հետ համատեղ, ուսումնասիրվել է *Taxus baccata* /Կենի հատապտղային/ Կարմիր գրքային տեսակը՝ համաձայն տեղադրված փորձահրապարակի տեղադիրքի: Այստեղ, որպես 2-րդ ցուցիչ տեսակ նշված է եղել *Anemone ranunculoides* - Վարդակակաչ գորտնուկայինը, որը դիտարկման ժամանակ չի եղել և չի նկատվել նաև անցած տարիներին:



R1 փորձահրապարակ – Գտնվում է «Աղավնավանք» տեղամաս մասնաճյուղում: Փորձահրապարակում ցուցիչ տեսակ ընտրված է եղել Կարմիր Գրքային *Anemone ranunculoides* - Վարդակակաչ գորտնուկայինը: Տարածքում բուսականության ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 40 %, խոտաբույսերի մակերեսը 20%, իսկ ծառաբույսերինը՝ մոտ 12%: Մամուռներ, քարաքոքսեր՝ 4%, բաց հողի մակերեսը կազմում է 62%: Ծառաբույսերի միջին բարձրությունը՝ 7մ է, խոտաբույսերինը 30սմ: Մշտադիտարկում իրականացվել է Բուսաբանության ինստիտուտի աշխատակիցների հետ համատեղ հունիս ամսվա ընթացքում, որի ժամանակ արդեն ավարտված է եղել բուսատեսակի վեգետացիոն շրջանը:

Սակայն սույն թվականի մայիս ամսվա 2-րդ կեսին «Դիլիջան» ազգային պարկ ՊՈԱԿ-ի գիտական բաժնի աշխատակիցների կողմից իրականացված շրջայցի ընթացքում փորձահրապարակի վերաբերյալ հավաքագրվել է տեղեկատվություն, որը ներկայացվել է Arcgis Survey 123 հավելվածում, օգոստոս ամսվա ընթացքում R2 փորձահրապարակում կատարած կրկնակի դիտարկման ժամանակ : Ստորև ներկայացվում է սույն թվականի մայիս ամսվա լուսանկարները, իսկ համակարգում առկա են օգոստոսին արված լուսանկարները:



R6 փորձահրապարակ - Գտնվում է «Հաղարծին» տեղամաս մասնաճյուղում: Փորձահրապարակում որպես ցուցիչ տեսակ ընտրված է *Anemone ranunculoides* - Վարդակակաչ գորտնուկայինը, որը օգոստոս ամսվա դիտարկման ժամանակ չի գրանցվել: Սակայն նույն տարածքում մայիսին կատարված ուսումնասիրության ժամանակ հավաքագրված տվյալները ներկայացվել են Arcgis Survey 123 հավելվածում: Այս փորձահրապարակում 2-րդ հազվագյուտ տեսակ նշված է *Taxus baccata* Կենի հատապտղայինը, սակայն նշված տեղամասում առհասարակ կենի չի գրանցվել:

Ստորև ներկայացված լուսանկարները մայիս ամսվա դիտարկման ժամանակ է լուսանկարված, իսկ օգոստոսին կատարված շրջայցի ժամանակ արված լուսանկարները ներկայացված են Arcgis Survey 123 հավելվածում:



R3 փորձահրապարակ - Գտնվում է «Աղավնավանք» տեղամաս մասնաճյուղում: ուսումնասիրվել է *Taxus baccata* /Կենի հատապտղային/ Կարմիր գրքային տեսակը՝ համաձայն տեղադրված փորձահրապարակի տեղադիրքի: Այստեղ, որպես 2-րդ ցուցիչ տեսակ նշված է եղել *Anemone ranunculoides* - Վարդակակաչ գորտնուկայինը, որը դիտարկման ժամանակ չի գրանցվել: Փորձահրապարակը բաավականին մոտ է գետին և սեզոնային վարարատմներով պայմանավորված *Anemone ranunculoides* - Վարդակակաչ գորտնուկայինի աճի և ծաղկման շրջանում տեսակի դիտարկումը և տվյալների հավաքագրումը բավականին դժվարանում է: Տարածքում բուսականության ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 55 %, խոտաբույսերի մակերեսը 10%, իսկ ծառաբույսերինը՝ մոտ

38%: Մամուռներ, քարաքոքեր՝ 3%, բաց հողի մակերեսը կազմում է 60%: Ծառաբույսերի միջին բարձրությունը՝ 10մ է, խոտաբույսերինը 30սմ:

R5 փորձահրապարակ - Փորձահրապարակում շրջայց իրականացվել է հունիս ամիսներին, սակայն տվյալներ չեն հավաքագրվել, քանի որ ավարտված է եղել *Anemone ranunculoides* - Վարդակակաչ գորտնուկայինի վեգետացիոն շրջանը: Եվս մեկ այցելություն իրականացվել է օգոստոսին, որի ժամանակ նյութերը ներկայացվել են ազգային պարկի կողմից, ոչ ծրագրի շրջանակներում մայիս ամսվա ընթացքում Աղավնավանք տեղամաս մասնաճյուղում իրականացված շրջայցի ժամանակ: Տարածքում բուսականության ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 86%, խոտաբույսերի մակերեսը 22%, իսկ ծառաբույսերինը՝ մոտ 70%: Մամուռներ, քարաքոքեր՝ 0%, բաց հողի մակերեսը կազմում է 50%: Ծառաբույսերի միջին բարձրությունը՝ 6մ է, խոտաբույսերինը 10սմ: Գարնանը արված լուսանկարներն ներկայացվում են հավելյան, իսկ տվյալները հավաքագրվել են Arcgis Survey 123 հավելվածում:



R9 փորձահրապարակ – Գտնվում է «Աղավնավանք տեղամաս» մասնաճյուղում: Փորձահրապարակում որպես ցուցիչ տեսակ ընտրված է *Taxus baccata* /Կենի հատապտղային/ տեսակն է: Տարածքում բուսականության ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 30 %, խոտաբույսերի մակերեսը 12%, իսկ ծառաբույսերինը՝ մոտ 24%: Մամուռներ, քարաքոքեր՝ 8%, բաց հողի մակերեսը կազմում է 60%: Ծառաբույսերի միջին բարձրությունը՝ 6մ է, խոտաբույսերինը 10սմ: Փորձահրապարակում *Anemone ranunculoides* - Վարդակակաչ գորտնուկային տեսակը չի գրանցվել:

	A /1մ/	B / 1մ/	C /1մ/
1/1մ/	Taxus baccata՝ առանձնյակների թիվը՝ 1		Taxus baccata՝ առանձնյակների թիվը՝ 0
2/1մ/		Բոլոր տեսակների թիվը՝ 4	
3/1մ/	Taxus baccata՝ առանձնյակների թիվը՝ 0		Taxus baccata՝ առանձնյակների թիվը՝ 0 Anemone ranunculoides՝ 0

Սակայն նույն տարածքում մայիսին կատարված ուսումնասիրության ժամանակ հավաքագրված տվյալները ներկայացվել են Arcgis Survey 123 հավելվածում:

R4 փորձահրապարակ – Գտնվում է «Աղավնավանք տեղամաս» մասնաճյուղում: Փորձահրապարակում որպես ցուցիչ տեսակ ընտրված է Taxus baccata /Կենի հատապտղային/ տեսակն է: Տարածքում բուսականության ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 78 %, խոտաբույսերի մակերեսը 22%, իսկ ծառաբույսերինը՝ մոտ 38%: Մամուռներ՝ 26% , քարաքոքսեր՝ 6%, բաց հողի մակերեսը կազմում է 24%: Ծառաբույսերի միջին բարձրությունը՝ 6մ է, խոտաբույսերինը 20սմ: Փորձահրապարակում Anemone ranunculoides - Վարդակակաչ գորտնուկային տեսակը չի գրանցվել:

	A /1մ/	B / 1մ/	C /1մ/
1/1մ/	Taxus baccata՝ առանձնյակների թիվը՝ 1		Taxus baccata՝ առանձնյակների թիվը՝ 1
2/1մ/		Բոլոր տեսակների թիվը՝ 3	
3/1մ/	Taxus baccata՝ առանձնյակների թիվը՝ 0		Taxus baccata՝ առանձնյակների թիվը՝ 0 Anemone ranunculoides՝ 0

Ինվազիվ/էքսպանսիվ տեսակներ

2. Ինվազիվ/էքսպանսիվ տեսակների մշտադիտարկման համար տեղադրվել են 1X10մ փորձահրապարակներ/տրանսեկտներ: Որտեղ 1-ին և 4-րդ ենթափորձահրապարակներում կատարվում է ցուցիչ տեսակի առանձնյակների քանակի հաշվարկ, իսկ 2-րդ, 5-րդ և 9-րդ ենթափորձահրապարակներում ընդհանուր հանդիպող բոլոր տեսակների թվի հաշվարկ:

1 (1x1մ)	2 (1x1մ)	3(1x1մ)	4(1x1մ)	5(1x1մ)	6(1x1մ)	7(1x1մ)	8(1x1մ)	9(1x1մ)	10(1x1մ)

Ինվազիվ տեսակների մոնիթորինգի համար տեղադրվել են I-41, I-40, I-27, I-19, I-15, I-10, I-2, I-38, I-22, I-23, I-21, I-9, I-5, I-1, I-37 փորձահրապարակներ և որպես թիրախային տեսակներ ընտրվել են՝

1. *Ailanthus altissima* - Երկնածառ բարձրավուն
2. *Leucanthemum vulgare* - Սպիտակածաղիկ սովորական
3. *Ambrosia artemisiifolia* – Ամբրոզիա օշինդրատերև
4. *Heracleum sosnowskii* - Բալդրդղան Սասնովսկու
5. *Rhynchosorys orientalis* - Կտուցախոտ արևելյան
6. *Veratrum album* - Կեղծ դանձլամեր սպիտակ
7. *Astragalus galegiformis* - Գազ այծմորուքանման

Փորձահրապարակ N I-41

Գտնվում է «Հաղարծին» տեղամաս մասնաճյուղում: Համաձայն ծրագրի փորձագետների կողմից իրականացված դասընթացի և ներկայացված տվյալների այս փորձահրապարակում, որպես ինվազիվ տեսակ ներկայացված է *Ailanthus altissima*-ն , սակայն այս տարվա և վերջին 5 տարիների ընթացքում տարածքում կատարված դիտայցերի շրջանակներում տեսակը երբևէ չի գրանցվել: Փորձահրապարակում ինվազիվ տեսակներից գրանցվել է *Heracleum sosnowskii* - Բալդրդղան Սասնովսկու տեսակը: Փորձահրապարակում հավաքագրված տվյալները ներկայացված են Arcgis Survey 123 հավելվածում: Տարածքում բուսականության ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 90 %, խոտաբույսերի մակերեսը 70%, իսկ ծառաբույսերինը՝ մոտ 20%: Մամուռներ, քարաքոքսեր չկան, բաց հողի մակերեսը կազմում է 10%: Ծառաբույսերի միջին բարձրությունը՝ 4մ է, խոտաբույսերինը 30-40սմ:



Ստորև ներկայացվում է Փորձահրապարակ N I-41 փորձահրապարակում /1X10մ/, *Heracleum sosnowskii* ինվազիվ տեսակի մշտադիտարկման համար հավաքագրված տվյալները:

1 /1x1մ/	2 /1x1մ/	3/1x1մ/	4/1x1մ/	5/1x1մ/	6/1x1մ/	7/1x1մ/	8/1x1մ/	9/1x1մ/	10/1x1մ/
<i>Heracleum sosnowskii</i> -առանձնյակների թիվը 2	Բոլոր բուսատեսակների տեսակային հարստությունը 7		<i>Heracleum sosnowskii</i> -առանձնյակների թիվը 0	Բոլոր բուսատեսակների տեսակային հարստությունը 5				Բոլոր բուսատեսակների տեսակային հարստությունը 11	

Կից ներկայացնում ենք փորձահրապարակի սույն թվականի հուլիս ամսվա լուսանկարը:



Փորձահրապարակ N I-5

Գտնվում է «Շամախյան» տեղամաս մասնաճյուղում: Համաձայն ծրագրի փորձագետների կողմից իրականացված դասընթացի և ներկայացված տվյալների այս փորձահրապարակում, որպես ինվազիվ տեսակ ներկայացված է *Veratrum album* - Կեղծ դանձլամեր սպիտակ տեսակը, սակայն ուսումնասիրության ժամանակ տեսակը չի գրանցվել: Փորձահրապարակում ինվազիվ տեսակներից գրանցվել է *Rhynchosorys orientalis* - Կտուցախոտ արևելյան տեսակը: Փորձահրապարակում հավաքագրված տվյալները ներկայացված են Arcgis Survey 123 հավելվածում: Տարածքում վերջին ամսիներին հողօգտագործման տեսակները բացակայում են: Բուսականության ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 98%, խոտաբույսերի մակերեսը 90%, իսկ ծառաբույսերինը՝ մոտ

Rhynchosorys orientalis առանձնյակների թիվը 2	Բոլոր բուսատեսակների տեսակային հարստությունը 15		Rhynchosorys orientalis առանձնյակների թիվը 1	Բոլոր բուսատեսակների տեսակային հարստությունը 22				Բոլոր բուսատեսակների տեսակային հարստությունը 14	
--	---	--	--	---	--	--	--	---	--

5%: Մամուռներ, քարաքոսեր չկան, բաց հողի մակերեսը կազմում է 10%: Ծառաբույսերի միջին բարձրությունը՝ 6մ է, խտաբույսերինը 70-90սմ:

Ստորև ներկայացվում է Փորձահրապարակ N I-5 փորձահրապարակում /1X10մ/, Rhynchosorys orientalis /Կտուցախոտ արևելյան/ ինվազիվ տեսակի մշտադիտարկման համար հավաքագրված տվյալները:

Փորձահրապարակ N I-1

Գտնվում է «Դիլիջան» տեղամաս մասնաճյուղում: Համաձայն ծրագրի փորձագետների կողմից իրականացված դասընթացի և ներկայացված տվյալների այս փորձահրապարակում, որպես ինվազիվ տեսակ ներկայացված է Veratrum album - Կեղծ դանձլամեր սպիտակ տեսակը, սակայն ուսումնասիրության ժամանակ տեսակը չի գրանցվել: Փորձահրապարակում ինվազիվ տեսակներից գրանցվել է Leucanthemum vulgare /Սպիտակաձաղիկ սովորական/ տեսակը: Փորձահրապարակում հավաքագրված տվյալները ներկայացված են Arcgis Survey 123 հավելվածում: Տարածքում վերջին ամսիներին հողօգտագործման տեսակները բացակայում են: Բուսականության ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 90%, խտաբույսերի մակերեսը 82%, իսկ ծառաբույսերինը՝ մոտ 5%: Մամուռներ, քարաքոսեր չկան, բաց հողի մակերեսը կազմում է 10%: Ծառաբույսերի միջին բարձրությունը՝ 4մ է, խտաբույսերինը 20-30սմ: Leucanthemum vulgare փորձահրապարակում գրանցվել է լրիվ չորացած վճակում:

Ստորև ներկայացվում է Փորձահրապարակ N I-1 փորձահրապարակում /1X10մ/, Leucanthemum vulgare / Սպիտակաձաղիկ սովորական/ ինվազիվ/էքսպանսիվ տեսակի մշտադիտարկման համար հավաքագրված տվյալները:

1 /1x1մ/	2 /1x1մ/	3/1x1մ/	4/1x1մ/	5/1x1մ/	6	7	8	9/1x1մ/	10/1x1մ/
Leucanthemum vulgare առանձնյակների թիվը 1	Բոլոր բուսատեսակների տեսակային հարստությունը 9		Leucanthemum vulgare առանձնյակների թիվը 0	Բոլոր բուսատեսակների տեսակային հարստությունը 10				Բոլոր բուսատեսակների տեսակային հարստությունը 6	



Փորձահրապարակ N I-10

Գտնվում է «Դիլիջան» տեղամաս մասնաճյուղում: Համաձայն ծրագրի փորձագետների կողմից իրականացված դասընթացի և ներկայացված տվյալների այս փորձահրապարակում, որպես ինվազիվ/էքսպանսիվ տեսակ ներկայացված է *Leucanthemum vulgare* /Սպիտակաձաղիկ սովորական/ տեսակը: Փորձահրապարակում հավաքագրված տվյալները ներկայացված են Arcgis Survey 123 հավելվածում: Տարածքում վերջին ամսիներին հողօգտագործման տեսակները բացակայում են: Բուսականության ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 80%, խոտաբույսերի մակերեսը 66%, իսկ ծառաբույսերինը՝ մոտ 14%: Մամուռներ, քարաքոսեր չկան, բաց հողի մակերեսը կազմում է 16%: Ծառաբույսերի միջին բարձրությունը՝ 6մ է, խոտաբույսերինը 20-40սմ: *Leucanthemum vulgare* փորձահրապարակում գրանցվել է լրիվ չորացած վճակում:

Ստորև ներկայացվում է Փորձահրապարակ N I-10 փորձահրապարակում /1x10մ/, *Leucanthemum vulgare* / Սպիտակաձաղիկ սովորական/ ինվազիվ/էքսպանսիվ տեսակի մշտադիտարկման համար հավաքագրված տվյալները:

1 /1x1մ/	2 /1x1մ/	3/1x1մ/	4/1x1մ/	5/1x1մ/	6	7	8	9/1x1մ/	10/1x1մ/
<i>Leucanthemum vulgare</i> առանձնյակների թիվը 5	Բոլոր բուսատեսակների տեսակային հարստությունը 7		<i>Leucanthemum vulgare</i> առանձնյակների թիվը 2	Բոլոր բուսատեսակների տեսակային հարստությունը 6				Բոլոր բուսատեսակների տեսակային հարստությունը 5	

Arcgis Survey 123 հավելվածում ներկայացված է օգոստոսի 29-ին արված լուսանկարներն ու տվյալները:

Փորձահրապարակ N I-9

Համաձայն ծրագրի փորձագետների կողմից իրականացված դասընթացի և ներկայացված տվյալների այս փորձահրապարակում, որպես ինվազիվ տեսակ ներկայացված է *Veratrum album* - Կեղծ դանձլամեր սպիտակ տեսակը:

Տվյալ փորձահրապարակը գտնվում է Դիլիջան ազգային պարկի տարածքից դուրս, սակայն հավաքագրվել են տվյալներ և ներկայացվել Arcgis Survey 123 հավելվածում:



Փորձահրապարակ N I-23

Համաձայն ծրագրի փորձագետների կողմից իրականացված դասընթացի և ներկայացված տվյալների այս փորձահրապարակում, որպես ինվազիվ/էքսպանսիվ տեսակ ներկայացված է *Heracleum sosnowskii* - Բալդրղան Սասնովսկու տեսակը: Փորձահրապարակը գտնվում է «Հաղարծին տաեղամաս» մասնաճյուղում: Փորձահրապարակում հավաքագրված տվյալները ներկայացված են Arcgis Survey 123 հավելվածում: Տարածքում բուսականության ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 90 %, խոտաբույսերի մակերեսը 90%, իսկ ծառաբույսերինը՝ մոտ 10%: Մամուռներ, քարաքոքսեր չկան, բաց հողի մակերեսը կազմում է 2-5%: Ծառաբույսեր փորձահրապարակում չկան, խոտաբույսերինը 50սմ:

Ստորև ներկայացվում է Փորձահրապարակ N I-23 փորձահրապարակում /1X10մ/, *Heracleum sosnowskii* ինվազիվ տեսակի մշտադիտարկման համար հավաքագրված տվյալները: Փորձահրապարակի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն և լուսանկարներ ներկայացվել է տվյալներ և ներկայացվել Arcgis Survey 123 հավելվածում:

1 /1x1մ/	2 /1x1մ/	3/1x1մ/	4/1x1մ/	5/1x1մ/	6/1x1մ/	7/1x1մ/	8/1x1մ/	9/1x1մ/	10/1x1մ/
Heracleum sosnowskii- առանձնյակների թիվը 5	Բոլոր բուսատեսակների տեսակային հարստությունը 12		Heracleum sosnowskii- առանձնյակների թիվը 2	Բոլոր բուսատեսակների տեսակային հարստությունը 9				Բոլոր բուսատեսակների տեսակային հարստությունը 5	

Փորձահրապարակ N I-22

Համաձայն ծրագրի փորձագետների կողմից իրականացված դասընթացի և ներկայացված տվյալների այս փորձահրապարակում, որպես ինվազիվ/էքսպանսիվ տեսակ ներկայացված է *Heracleum sosnowskii* - Բալդրղան Սասնովսկու տեսակը: Փորձահրապարակը գտնվում է «Հաղարծին տաեղամաս» մասնաճյուղում: Փորձահրապարակում հավաքագրված տվյալները ներկայացված են Arcgis Survey 123 հավելվածում: Տարածքում բուսականության ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 84 %, խոտաբույսերի մակերեսը 82%, իսկ ծառաբույսերինը՝ մոտ 5%: Մամուռներ՝ 6%, քարաքոքսեր չկան, բաց հողի մակերեսը կազմում է 2%: Ծառաբույսեր փորձահրապարակում չկան, խոտաբույսերինը 100սմ:

Ստորև ներկայացվում է Փորձահրապարակ N I-22 փորձահրապարակում /1X10մ/, *Heracleum sosnowskii* ինվազիվ տեսակի մշտադիտարկման համար հավաքագրված տվյալները:

Փորձահրապարակի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն և լուսանկարներ ներկայացվել է տվյալներ և ներկայացվել Arcgis Survey 123 հավելվածում:

1 /1x1մ/	2 /1x1մ/	3/1x1մ/	4/1x1մ/	5/1x1մ/	6/1x1մ/	7/1x1մ/	8/1x1մ/	9/1x1մ/	10/1x1մ/
Heracleum sosnowskii- առանձնյակների թիվը 6	Բոլոր բուսատեսակների տեսակային հարստությունը 0		Heracleum sosnowskii- առանձնյակների թիվը 0	Բոլոր բուսատեսակների տեսակային հարստությունը 8				Բոլոր բուսատեսակների տեսակային հարստությունը 7	

Փորձահրապարակ N I-21

Համաձայն ծրագրի փորձագետների կողմից իրականացված դասընթացի և ներկայացված տվյալների այս փորձահրապարակում, որպես ինվազիվ/էքսպանսիվ տեսակ ներկայացված է *Rhynchocorys orientalis* - Կտուցախոտ արևելյան տեսակը: Փորձահրապարակում հավաքագրված տվյալները ներկայացված են Arcgis Survey 123 հավելվածում: Տարածքում վերջին ամսիներին հողօգտագործման տեսակները բացակայում են: Բուսականության ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 100%, խոտաբույսերի մակերեսը 100%: Մամուռներ, քարաքոսեր չկան, բաց հողի մակերեսը կազմում է 2%, խոտաբույսերի բարձրությունը՝ 70սմ:

Ստորև ներկայացվում է Փորձահրապարակ N I-21 փորձահրապարակում /1X10մ/, *Rhynchocorys orientalis* /Կտուցախոտ արևելյան/ ինվազիվ տեսակի մշտադիտարկման համար հավաքագրված տվյալները:

1 /1x1մ/	2 /1x1մ/	3/1x1մ/	4/1x1մ/	5/1x1մ/	6	7	8	9/1x1մ/	10/1x1մ/
<i>Rhynchocorys orientalis</i> առանձնյակների թիվը 35	Բոլոր բուսատեսակների տեսակային հարստությունը 15		<i>Rhynchocorys orientalis</i> առանձնյակների թիվը 16	Բոլոր բուսատեսակների տեսակային հարստությունը 12				Բոլոր բուսատեսակների տեսակային հարստությունը 12	

Փորձահրապարակի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն և լուսանկարներ ներկայացվել է տվյալներ և ներկայացվել Arcgis Survey 123 հավելվածում:

Փորձահրապարակ N I-2

Համաձայն ծրագրի փորձագետների կողմից իրականացված դասընթացի և ներկայացված տվյալների այս փորձահրապարակում, որպես ինվազիվ/էքսպանսիվ տեսակ ներկայացված է *Leucanthemum vulgare* /Սպիտակածաղիկ սովորական/ տեսակը: Փորձահրապարակում հավաքագրված տվյալները ներկայացված են Arcgis Survey 123 հավելվածում: Տարածքում վերջին ամսիներին հողօգտագործման տեսակները բացակայում են: Բուսականության ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 94%, խոտաբույսերի մակերեսը 86%, իսկ ծառաբույսերինը՝ մոտ 10%: Մամուռներ, քարաքոսեր՝ 4%, բաց հողի մակերեսը կազմում է 2%: Ծառաբույսերի միջին բարձրությունը՝ 3մ է, խոտաբույսերինը 60սմ: *Leucanthemum vulgare* փորձահրապարակում գրանցվել է լրիվ չորացած վճակում:

Ստորև ներկայացվում է Փորձահրապարակ N I-2 փորձահրապարակում /1X10մ/, *Leucanthemum vulgare* / Սպիտակածաղիկ սովորական/ ինվազիվ/էքսպանսիվ տեսակի մշտադիտարկման համար հավաքագրված տվյալները:

1 /1x1մ/	2 /1x1մ/	3/1x1մ/	4/1x1մ/	5/1x1մ/	6	7	8	9/1x1մ/	10/1x1մ/
<i>Leucanthemum vulgare</i> առանձնյակների թիվը 7	Բոլոր բուսատեսակների տեսակային հարստությունը 21		<i>Leucanthemum vulgare</i> առանձնյակների թիվը 3	Բոլոր բուսատեսակների տեսակային հարստությունը 19				Բոլոր բուսատեսակների տեսակային հարստությունը 17	

Փորձահրապարակ N I-38

Համաձայն ծրագրի փորձագետների կողմից իրականացված դասընթացի և ներկայացված տվյալների այս փորձահրապարակում, որպես ինվազիվ/էքսպանսիվ տեսակ ներկայացված է *Ambrosia artemisiifolia* – Ամբրոզիա օշինդրատերև տեսակը: Փորձահրապարակը գտնվում է «Գոշ տաեղամաս» մասնաճյուղում: Փորձահրապարակում հավաքագրված տվյալները ներկայացված են Arcgis Survey 123 հավելվածում: Տարածքում բուսականության ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 84 %, խոտաբույսերի մակերեսը 82%, իսկ ծառաբույսերինը՝ մոտ 5%: Մամուռներ՝ 6%, քարաքոսեր չկան, բաց հողի մակերեսը կազմում է 2%: Ծառաբույսեր փորձահրապարակում չկան, խոտաբույսերինը 100սմ:

Ստորև ներկայացվում է Փորձահրապարակ N I-38 փորձահրապարակում /1X10մ/, *Heracleum sosnowskii* ինվազիվ տեսակի մշտադիտարկման համար հավաքագրված տվյալները:

Փորձահրապարակի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն և լուսանկարներ ներկայացվել է տվյալներ և ներկայացվել Arcgis Survey 123 հավելվածում:

1 /1x1մ/	2 /1x1մ/	3/1x1մ/	4/1x1մ/	5/1x1մ/	6/1x1մ/	7/1x1մ/	8/1x1մ/	9/1x1մ/	10/1x1մ/
Ambrosia artemisiifolia առանձնյակների թիվը 6	Բոլոր բուսատեսակների տեսակային հարստությունը 0		Ambrosia artemisiifolia առանձնյակների թիվը 0	Բոլոր բուսատեսակների տեսակային հարստությունը 8				Բոլոր բուսատեսակների տեսակային հարստությունը 7	

Փորձահրապարակ N I-37 – Խախտված էկոհամակարգ՝ մարդու գործունեության հետևանքով:

Փորձահրապարակ N I-15

Համաձայն ծրագրի փորձագետների կողմից իրականացված դասընթացի և ներկայացված տվյալների այս փորձահրապարակում, որպես ինվազիվ/էքսպանսիվ տեսակ ներկայացված է *Leucanthemum vulgare* /Սպիտակածաղիկ սովորական/ տեսակը: Փորձահրապարակում հավաքագրված տվյալները ներկայացված են Arcgis Survey 123 հավելվածում: Տարածքում վերջին ամսիներին հողօգտագործման տեսակները բացակայում են: Բուսականության ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 94%, խոտաբույսերի մակերեսը 82%, իսկ ծառաբույսերինը՝ մոտ 10%: Մամուռներ, քարաքոսեր՝ 6-8%, բաց հողի մակերեսը կազմում է 6%: Ծառաբույսերի միջին բարձրությունը՝ 6մ է, խոտաբույսերինը 60սմ: *Leucanthemum vulgare* փորձահրապարակում գրանցվել է լրիվ չորացած վճակում:

Ստորև ներկայացվում է N I-15 փորձահրապարակում /1X10մ/, *Leucanthemum vulgare* /Սպիտակածաղիկ սովորական/ ինվազիվ/էքսպանսիվ տեսակի մշտադիտարկման համար հավաքագրված տվյալները:

Առաջարկվում է կատարել փորձահրապարակի փոփոխություն քանի, որ օգտագործվող ճանապարհին բավականին մոտ է, ինչն էլ կարող է պատճառ հանդիսանալ փորձահրապարակում էկոհամակարգի ամբողջականության խախտման:

1 /1x1մ/	2 /1x1մ/	3/1x1մ/	4/1x1մ/	5/1x1մ/	6	7	8	9/1x1մ/	10/1x1մ/
Leucanthemum vulgare առանձնյակների թիվը 2	Բոլոր բուսատեսակների տեսակային հարստությունը 10		Leucanthemum vulgare առանձնյակների թիվը 1	Բոլոր բուսատեսակների տեսակային հարստությունը 14				Բոլոր բուսատեսակների տեսակային հարստությունը 7	

Փորձահրապարակ N I-19

Համաձայն ծրագրի փորձագետների կողմից իրականացված դասընթացի և ներկայացված տվյալների այս փորձահրապարակում, որպես ինվազիվ/էքսպանսիվ տեսակ ներկայացված է Leucanthemum vulgare /Սպիտակաձաղիկ սովորական/ տեսակը: Փորձահրապարակում հավաքագրված տվյալները ներկայացված են Arcgis Survey 123 հավելվածում: Տարածքում վերջին ամսիններին հողօգտագործման տեսակները բացակայում են: Բուսականության ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 96%, խոտաբույսերի մակերեսը 94%, ծառաբույսեր չկան: Մամուռներ, քարաքոսեր՝ 2%, բաց հողի մակերեսը կազմում է 2%: Խոտաբույսերինը 50-60սմ: Leucanthemum vulgare փորձահրապարակում գրանցվել է լրիվ չորացած վճակում:

Ստորև ներկայացվում է N I-19 փորձահրապարակում /1X10մ/, Leucanthemum vulgare / Սպիտակաձաղիկ սովորական/ ինվազիվ/էքսպանսիվ տեսակի մշտադիտարկման համար հավաքագրված տվյալները:

Առաջարկվում է կատարել փորձահրապարակի փոփոխություն քանի, որ օգտագործվող ճանապարհին բավականին մոտ է, ինչն էլ կարող է պատճառ հանդիսանալ փորձահրապարակում էկոհամակարգի ամբողջականության խախտման:

1 /1x1մ/	2 /1x1մ/	1x1	4/1x1մ/	5/1x1մ/	6	7	8	9/1x1մ/	1x1
Leucanthemum vulgare առանձնյակների թիվը 2	Բոլոր բուսատեսակների տեսակային հարստությունը 7		Leucanthemum vulgare առանձնյակների թիվը 0	Բոլոր բուսատեսակների տեսակային հարստությունը 15				Բոլոր բուսատեսակների տեսակային հարստությունը 12	

Անտառի վիճակը բնութագրող ցուցիչ տեսակներ

3. Անտառի վիճակը բնութագրող ցուցիչ տեսակներ - մշտադիտարկման համար տեղադրվել 1X10մ փորձահրապարակներ/տրանսեկտներ :

1 (1x1մ)	2 (1x1մ)	3(1x1մ)	4(1x1մ)	5(1x1մ)	6(1x1մ)	7(1x1մ)	8(1x1մ)	9(1x1մ)	10(1x1մ)

Որտեղ 1-ին, 4-րդ, 7-րդ ենթափորձահրապարակներում կատարվել է ցուցիչ տեսակի առանձնյակների քանակի հաշվարկ, իսկ 2-րդ, 5-րդ և 9-րդ ենթափորձահրապարակներում ընդհանուր հանդիպող բոլոր տեսակների թվի հաշվարկ:

Անտառի վիճակը բնութագրող ցուցիչ տեսակներ են հետևյալ բուսատեսակները՝

1. Sanicula europaea - Սանիկուլ եվրոպական
2. Geranium robertianum - Խորդենի Ռոբերտի
3. Asplenium scolopendrium - Ասպլեն սցոլոպենդրաձև
4. Dryopteris filix-mas - Վահանապտեր արական
5. Dentaria bulbifera - Ատամնախոտ

Անտառի վիճակը բնութագրող ցուցիչ տեսակների դիտարկման համար տեղադրվել են՝ F7, F10, F11, F12, F13, F14, F15, F16, F17, F18, F19, F20, F 21, F22, F23 փորձահրապարակները:

Փորձահրապարակ N F16 - Փորձահրապարակը գոյություն չունի գարնանը գետի հունի բնական փոփոխման հետևանքով:

Փորձահրապարակ N F17 Համաձայն ծրագրի փորձագետների կողմից իրականացված դասընթացի և ներկայացված տվյալների այս փորձահրապարակում անտառի վիճակը բնութագրող ցուցիչ տեսակներից ներկայացված է Dryopteris filix-mas տեսակը: Սակայն փորձահրապարակում անտառի վիճակը բնութագրող ցուցիչ տեսակներից բավականին շատ թվաքանակով, առկա էին նաև հետևյալ տեսակները՝

1. Geranium robertianum - Խորդենի Ռոբերտի
2. Asplenium scolopendrium - Ասպլեն սցոլոպենդրաձև

Տարածքում բուսականության ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 21 %, խոտաբույսերի մակերեսը 15%, իսկ ծառաբույսերինը՝ մոտ 1%: Մամուռներ՝ 23%, քարաոքեր՝ 5%, բաց հողի մակերեսը կազմում է 23%, ժայռեր, քարեր՝ 11%: Ծառաբույսեր փորձահրապարակում չկան,

խոտաբույսերինը 40սմ: Փորձահրապարակում հավաքագրված տվյալները մանրամասն ներկայացված են Arcgis Survey 123 հավելվածում:

Փորձահրապարակ N F21 Համաձայն ծրագրի փորձագետների կողմից իրականացված դասընթացի և ներկայացված տվյալների այս փորձահրապարակում անտառի վիճակը բնութագրող ցուցիչ տեսակներից ներկայացված է Geranium robertianum տեսակը: Սակայն փորձահրապարակում անտառի վիճակը բնութագրող ցուցիչ տեսակներից առկա էր նաև Sanicula europaea տեսակը:

Տարածքում բուսականության ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 25 %, խոտաբույսերի մակերեսը 15%, իսկ ծառաբույսերինը՝ մոտ 9%: Մամուռներ, քարաոքսեր՝ գրեթե չկան, բաց հողի մակերեսը կազմում է 75%, ժայռեր, քարեր՝ 11%: Ծառաբույսերի բարձրությունը՝ 8մ, խոտաբույսերինը՝ 10սմ: Փորձահրապարակում հավաքագրված տվյալները մանրամասն ներկայացված են Arcgis Survey 123 հավելվածում:

Փորձահրապարակ N F 22 Համաձայն ծրագրի փորձագետների կողմից իրականացված դասընթացի և ներկայացված տվյալների այս փորձահրապարակում անտառի վիճակը բնութագրող ցուցիչ տեսակներից ներկայացված է Dentaria bulbifera տեսակը, իսկ 2-րդ ցուցիչ տեսակը Geranium robertianum :

Տարածքում բուսականության ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 43 %, խոտաբույսերի մակերեսը 11%, իսկ ծառաբույսերինը՝ մոտ 25%: Մամուռներ՝ 5%, քարաոքսեր՝ 7%, բաց հողի մակերեսը կազմում է 3%, ժայռեր, քարեր՝ 2%: Ծառաբույսերի միջին բարձրությունը՝ 9մ, խոտաբույսերինը՝ 15սմ: Փորձահրապարակում հավաքագրված տվյալները մանրամասն ներկայացված են Arcgis Survey 123 հավելվածում:

Փորձահրապարակ N F 18 Համաձայն ծրագրի փորձագետների կողմից իրականացված դասընթացի և ներկայացված տվյալների այս փորձահրապարակում անտառի վիճակը բնութագրող ցուցիչ տեսակներից ներկայացված է Dryopteris filix-mas: տեսակը, իսկ 2-րդ ցուցիչ տեսակը Geranium robertianum :

Տարածքում բուսականության ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 91 %, խոտաբույսերի մակերեսը 85%, իսկ ծառաբույսերինը՝ մոտ 9%: Մամուռներ՝ 7%, քարաոքսեր՝ 1%, բաց հողի մակերեսը կազմում է 9%, ժայռեր, քարեր՝ 2%: Ծառաբույսերի միջին բարձրությունը՝ 10մ,

խոտաբույսերինը՝ 80սմ: Փորձահրապարակում հավաքագրված տվյալները մանրամասն ներկայացված են Arcgis Survey 123 հավելվածում:

Փորձահրապարակ N F 19 Համաձայն ծրագրի փորձագետների կողմից իրականացված դասընթացի և ներկայացված տվյալների այս փորձահրապարակում անտառի վիճակը բնութագրող ցուցիչ տեսակներից ներկայացված է *Dryopteris filix-mas*: տեսակը, իսկ 2-րդ ցուցիչ տեսակը *Asplenium scolopendrium* :

Տարածքում բուսականության ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 75%, խոտաբույսերի մակերեսը 63%, իսկ ծառաբույսերինը՝ մոտ 25%: Մամուռներ՝ 45%, քարաոքեր՝ 15%, բաց հողի մակերեսը կազմում է 21%, ժայռեր, քարեր՝ 20%: Ծառաբույսերի միջին բարձրությունը՝ 6մ, խոտաբույսերինը՝ 70սմ: Փորձահրապարակում հավաքագրված տվյալները մանրամասն ներկայացված են Arcgis Survey 123 հավելվածում:

Փորձահրապարակ N F 20 Համաձայն ծրագրի փորձագետների կողմից իրականացված դասընթացի և ներկայացված տվյալների այս փորձահրապարակում անտառի վիճակը բնութագրող ցուցիչ տեսակներից ներկայացված է *Dryopteris filix-mas*: տեսակը, իսկ 2-րդ ցուցիչ տեսակը *Asplenium scolopendrium* :

Տարածքում բուսականության ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 51%, խոտաբույսերի մակերեսը 39%, իսկ ծառաբույսերինը՝ մոտ 25%: Մամուռներ՝ 23%, քարաոքեր՝ 5%, բաց հողի մակերեսը կազմում է 31%, ժայռեր, քարեր՝ 7%: Ծառաբույսերի միջին բարձրությունը՝ 10մ, խոտաբույսերինը՝ 40սմ: Փորձահրապարակում հավաքագրված տվյալները մանրամասն ներկայացված են Arcgis Survey 123 հավելվածում:

Փորձահրապարակ N F 15 - Համաձայն ծրագրի փորձագետների կողմից իրականացված դասընթացի և ներկայացված տվյալների այս փորձահրապարակում անտառի վիճակը բնութագրող ցուցիչ տեսակներից ներկայացված է *Sanicula europaea* տեսակը, իսկ 2-րդ ցուցիչ տեսակը *Geranium robertianum* :Տարածքում բուսականության ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 39 %, խոտաբույսերի մակերեսը 23%, իսկ ծառաբույսերինը՝ մոտ 63%: Մամուռներ՝ 15%, քարաոքեր՝ 5%, բաց հողի մակերեսը կազմում է 53%, ժայռեր, քարեր՝ 7%: Ծառաբույսերի միջին բարձրությունը՝ 4մ, խոտաբույսերինը՝ 20սմ: Փորձահրապարակում հավաքագրված տվյալները մանրամասն ներկայացված են Arcgis Survey 123 հավելվածում:



Փորձահրապարակ N F12 - Համաձայն ծրագրի փորձագետների կողմից իրականացված դասընթացի և ներկայացված տվյալների այս փորձահրապարակում անտառի վիճակը բնութագրող ցուցիչ տեսակներից ներկայացված է *Geranium robertianum* տեսակը, իսկ 2-րդ ցուցիչ տեսակը *Dryopteris filix-mas*:

Տարածքում բուսականության ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 83 %, խոտաբույսերի մակերեսը 47%, իսկ ծառաբույսերինը՝ մոտ 31%: Մամուռներ՝ 11%, քարաոքսեր՝ 3%, բաց հողի մակերեսը կազմում է 15%, ժայռեր, քարեր՝ 5%: Ծառաբույսերի միջին բարձրությունը՝ 12մ, խոտաբույսերինը՝ 30սմ: Փորձահրապարակում հավաքագրված տվյալները մանրամասն ներկայացված են Arcgis Survey 123 հավելվածում:

Փորձահրապարակ N F11 - Համաձայն ծրագրի փորձագետների կողմից իրականացված դասընթացի և ներկայացված տվյալների այս փորձահրապարակում անտառի վիճակը բնութագրող ցուցիչ տեսակներից ներկայացված է *Geranium robertianum* տեսակը, իսկ 2-րդ ցուցիչ տեսակը *Sanicula europaea* :

Տարածքում բուսականության ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 61 %, խոտաբույսերի մակերեսը 49%, իսկ ծառաբույսերինը՝ մոտ 5%: Մամուռներ՝ 19%, քարաոքսեր՝ 9%, բաց հողի մակերեսը կազմում է 15%, ժայռեր, քարեր՝ 15%: Ծառաբույսերի միջին բարձրությունը՝ 6մ, խոտաբույսերինը՝ 60: Փորձահրապարակում հավաքագրված տվյալները մանրամասն ներկայացված են Arcgis Survey 123 հավելվածում:

Փորձահրապարակ N F10 - Համաձայն ծրագրի փորձագետների կողմից իրականացված դասընթացի և ներկայացված տվյալների այս փորձահրապարակում անտառի վիճակը բնութագրող ցուցիչ տեսակներից ներկայացված է *Sanicula europaea* տեսակը, իսկ 2-րդ ցուցիչ տեսակը *Geranium robertianum* : Փորձահրապարակում, որպես 2-րդ ցուցիչ տեսակ առկա է նաև *Dryopteris filix-mas*:

Տարածքում բուսականության ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 69 %, խոտաբույսերի մակերեսը 33%, իսկ ծառաբույսերինը՝ մոտ 7%: Մամուռներ՝ 3%, քարաոքսեր՝ 9%, բաց հողի մակերեսը կազմում է 50%, ժայռեր, քարեր՝ 11%: Ծառաբույսերի միջին բարձրությունը՝ 4մ, խոտաբույսերինը՝ 30սմ: Փորձահրապարակում հավաքագրված տվյալները մանրամասն ներկայացված են Arcgis Survey 123 հավելվածում:

Փորձահրապարակ N F13 - Համաձայն ծրագրի փորձագետների կողմից իրականացված դասընթացի և ներկայացված տվյալների այս փորձահրապարակում անտառի վիճակը բնութագրող ցուցիչ տեսակներից ներկայացված է *Sanicula europaea* տեսակը, իսկ 2-րդ ցուցիչ տեսակը *Geranium robertianum* : Փորձահրապարակում, որպես 2-րդ ցուցիչ տեսակ գրանցվել է նաև *Dryopteris filix-mas*: Տարածքում բուսականության ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 77 %, խոտաբույսերի մակերեսը 41%, իսկ ծառաբույսերինը՝ մոտ 17%: Մամուռներ՝ 5%, քարաոքսեր՝ 9%, բաց հողի մակերեսը կազմում է 33%, ժայռեր, քարեր՝ 7%: Ծառաբույսերի միջին բարձրությունը՝ 7մ, խոտաբույսերինը՝ 30սմ: Փորձահրապարակում հավաքագրված տվյալները մանրամասն ներկայացված են Arcgis Survey 123 հավելվածում:

Փորձահրապարակ N F14 - Համաձայն ծրագրի փորձագետների կողմից իրականացված դասընթացի և ներկայացված տվյալների այս փորձահրապարակում անտառի վիճակը բնութագրող ցուցիչ տեսակներից ներկայացված է *Sanicula europaea* տեսակը, իսկ 2-րդ ցուցիչ տեսակը *Geranium robertianum* : Տարածքում բուսականության ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 61%, խոտաբույսերի մակերեսը 29%, իսկ ծառաբույսերինը՝ մոտ 19%: Մամուռներ՝ 7%, քարաոքսեր՝ չկան, բաց հողի մակերեսը կազմում է 43%, ժայռեր, քարեր՝ 3%: Ծառաբույսերի միջին բարձրությունը՝ 10մ, խոտաբույսերինը՝ 30-40սմ: Փորձահրապարակում հավաքագրված տվյալները մանրամասն ներկայացված են Arcgis Survey 123 հավելվածում:

Փորձահրապարակ N F23 - Համաձայն ծրագրի փորձագետների կողմից իրականացված դասընթացի և ներկայացված տվյալների այս փորձահրապարակում անտառի վիճակը բնութագրող ցուցիչ տեսակներից ներկայացված է *Dentaria bulbifera* տեսակը:

Տարածքում բուսականության ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 57%, խոտաբույսերի մակերեսը 11%, իսկ ծառաբույսերինը՝ մոտ 45%: Մամուռներ՝ 5%, քարաոքսեր՝ չկան, բաց հողի մակերեսը կազմում է 39%, ժայռեր, քարեր՝ 5%: Ծառաբույսերի միջին բարձրությունը՝ 6մ, խոտաբույսերինը՝ 20սմ: Փորձահրապարակում հավաքագրված տվյալները մանրամասն ներկայացված են Arcgis Survey 123 հավելվածում՝ մայիս մասվա ընթացքում կատարված դիտարկման հիման վրա: Կից ներկայացվում են նաև մայիսին արված լուսանկարները : Փորձահրապարակում, որպես 2-րդ ցուցիչ տեսակ գրանցվել է նաև *Dryopteris filix-mas* տեսակը:





Փորձահրապարակ N F 8 Համաձայն ծրագրի փորձագետների կողմից իրականացված դասընթացի և ներկայացված տվյալների այս փորձահրապարակում անտառի վիճակը բնութագրող ցուցիչ տեսակներից ներկայացված է ներկայացված է *Dentaria bulbifera* տեսակը: Սակայն փորձահրապարակում անտառի վիճակը բնութագրող ցուցիչ տեսակներից բավականին շատ թվաքանակով, առկա էին նաև հետևյալ տեսակները՝

1. *Geranium robertianum*
2. *Sanicula europaea*

Տարածքում բուսականության ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 71 %, խոտաբույսերի մակերեսը 53%, իսկ ծառաբույսերինը՝ մոտ 21%: Մամուռներ՝ 3%, քարաոքսեր՝ 3%, բաց հողի մակերեսը կազմում է 31%, ժայռեր, քարեր՝ 3%: Ծառաբույսերի բարձրությունը 18-20մ խոտաբույսերինը 10-15սմ: Փորձահրապարակում հավաքագրված տվյալները մանրամասն ներկայացված են Arcgis Survey 123 հավելվածում:

Փորձահրապարակ N F 7 Համաձայն ծրագրի փորձագետների կողմից իրականացված դասընթացի և ներկայացված տվյալների այս փորձահրապարակում անտառի վիճակը բնութագրող ցուցիչ տեսակներից ներկայացված է *Sanicula europaea* տեսակը: Սակայն փորձահրապարակում անտառի վիճակը բնութագրող ցուցիչ տեսակներից բավականին շատ թվաքանակով, առկա էին նաև հետևյալ տեսակները՝


- Geranium robertianum*
Dentaria bulbifera

Տարածքում բուսականության ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 70 %, խոտաբույսերի մակերեսը 20%, իսկ ծառաբույսերինը՝ մոտ 40%: Մամուռներ՝ 10%, քարաոքսեր՝

15%, բաց հողի մակերեսը կազմում է 20%, ժայռեր, քարեր՝ 5%: Ծառաբույսերի բարձրությունը 8-10մ խոտաբույսերինը 10-15սմ: Փորձահրապարակում հավաքագրված տվյալները մանրամասն ներկայացված են Arcgis Survey 123 հավելվածում:

ԷԿՈՒՍՄԱԿԱՐԳԵՐ

3. Էկոհամակարգեր - Տեղադրվում են 1X1մ փորձահրապարակներ: տեղադրվել են E3,E4, E6, E 7, E8, E11, E12, E13, E14, E16, E17, E18, E20, E24, E25, E 26, E28, E 29, E30, E31, E32, E33, E34, E35, E36, E39 փորձահրապարակներ, որտեղ հաշվարկվել են միայն հանդիպող բոլոր տեսակների թիվը:



Փորձահրապարակ N E16 - Տարածքում բուսականության ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 84%, խոտաբույսերի մակերեսը 60%, իսկ ծառաբույսերինը՝ մոտ 6%: Մամուռներ՝ 2%, քարաոքեր՝ 6%, բաց հողի մակերեսը կազմում է 22%, ժայռեր, քարեր՝ 4%: Ծառաբույսերի միջին բարձրությունը՝ 6մ, խոտաբույսերինը՝ 30սմ: Փորձահրապարակում հանդիպող բոլոր բուսատեսակների թիվը /տեսակային հարստությունը 8: Փորձահրապարակում հավաքագրված տվյալները մանրամասն ներկայացված են Arcgis Survey 123 հավելվածում:

Փորձահրապարակ N E4 - Տարածքում բուսականության ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 72%, խոտաբույսերի մակերեսը 18%, իսկ ծառաբույսերինը՝ մոտ 80%: Մամուռներ՝ 2%, քարաոքեր՝ 4%, բաց հողի մակերեսը կազմում է 64%, ժայռեր, քարեր՝ չկան: Ծառաբույսերի միջին բարձրությունը՝ 6մ, խոտաբույսերինը՝ 50սմ: Փորձահրապարակում հանդիպող բոլոր բուսատեսակների թիվը /տեսակային հարստությունը 6: Փորձահրապարակում հավաքագրված տվյալները մանրամասն ներկայացված են Arcgis Survey 123 հավելվածում:

Փորձահրապարակ N E17 - Տարածքում բուսականության ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 86%, խոտաբույսերի մակերեսը 72%, իսկ ծառաբույսերինը՝ չկան: Մամուռներ՝ 2%, քարաոքեր՝ 2%, բաց հողի մակերեսը կազմում է 12%, ժայռեր, քարեր՝ 6% : Խոտաբույսերինը միջին բարձրությունը՝ 60սմ: Փորձահրապարակում հանդիպող բոլոր բուսատեսակների թիվը /տեսակային հարստությունը 13: Փորձահրապարակում հավաքագրված տվյալները մանրամասն ներկայացված են Arcgis Survey 123 հավելվածում

Փորձահրապարակ N E18 -Տարածքում բուսականության ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 90%, խոտաբույսերի մակերեսը 82%, իսկ ծառաբույսերինը՝ մոտ 18%: Մամուռներ՝ 10%, քարառքեր՝ 8%, բաց հողի մակերեսը կազմում է 40%, ժայռեր, քարեր՝ 8%: Ծառաբույսերի միջին բարձրությունը՝ 12մ, խոտաբույսերինը՝ 50սմ: Փորձահրապարակում հանդիպող բոլոր բուսատեսակների թիվը /տեսակային հարստությունը 17: Փորձահրապարակում հավաքագրված տվյալները մանրամասն ներկայացված են Arcgis Survey 123 հավելվածում:

Փորձահրապարակ N E 31 - Տարածքում բուսականության ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 48%, խոտաբույսերի մակերեսը 10%, իսկ ծառաբույսերինը՝ մոտ 30%: Մամուռներ, քարառքեր՝ չկան, բաց հողի մակերեսը կազմում է 50%, ժայռեր, քարեր՝ չկան: Ծառաբույսերի միջին բարձրությունը՝ 10մ, խոտաբույսերինը՝ 20սմ: Փորձահրապարակում հանդիպող բոլոր բուսատեսակների թիվը /տեսակային հարստությունը 5: Փորձահրապարակում հավաքագրված տվյալները մանրամասն ներկայացված են Arcgis Survey 123 հավելվածում:

Փորձահրապարակ N E30 - Տարածքում բուսականության ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 40%, խոտաբույսերի մակերեսը 8%, իսկ ծառաբույսերինը՝ մոտ 34%: Մամուռներ, քարառքեր՝ չկան, բաց հողի մակերեսը կազմում է 60%, ժայռեր, քարեր՝ 2%: Ծառաբույսերի միջին բարձրությունը՝ 10մ, խոտաբույսերինը՝ 10-12սմ: Փորձահրապարակում հանդիպող բոլոր բուսատեսակների թիվը /տեսակային հարստությունը 4: Փորձահրապարակում հավաքագրված տվյալները մանրամասն ներկայացված են Arcgis Survey 123 հավելվածում:

Փորձահրապարակ N E 32 -Տարածքում բուսականության ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 80%, խոտաբույսերի մակերեսը 54%, իսկ ծառաբույսերինը՝ մոտ 28%: Մամուռներ՝ 2%, քարառքեր՝ 2%, բաց հողի մակերեսը կազմում է 46%, ժայռեր, քարեր՝ չկան: Ծառաբույսերի միջին բարձրությունը՝ 5մ, խոտաբույսերինը՝ 56սմ: Փորձահրապարակում հանդիպող բոլոր բուսատեսակների թիվը /տեսակային հարստությունը 16: Փորձահրապարակում հավաքագրված տվյալները մանրամասն ներկայացված են Arcgis Survey 123 հավելվածում:

Փորձահրապարակ N E 8- Տարածքում բուսականության ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 98%, խոտաբույսերի մակերեսը 90%, իսկ ծառաբույսերինը՝ մոտ 10%: Մամուռներ՝ 2%, քարառքեր՝ 0%, բաց հողի մակերեսը կազմում է 2-5%, ժայռեր, քարեր՝ 2%: Ծառաբույսերի միջին բարձրությունը՝ 5մ, խոտաբույսերինը՝ 50սմ: Փորձահրապարակում հանդիպող բոլոր



բուսատեսակների թիվը /տեսակային հարստությունը 19: Փորձահրապարակում հավաքագրված տվյալները մանրամասն ներկայացված են Arcgis Survey 123 հավելվածում:

Փորձահրապարակ N E 7-Տարածքում բուսականության ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 50%, խոտաբույսերի մակերեսը 10%, իսկ ծառաբույսերինը՝ մոտ 40%: Մամուռներ՝ 2%, քարառքեր՝ 2%, բաց հողի մակերեսը կազմում է 54%, ժայռեր, քարեր՝ 2%: Ծառաբույսերի միջին բարձրությունը՝ 5մ, խոտաբույսերինը՝ 20սմ: Փորձահրապարակում հանդիպող բոլոր բուսատեսակների թիվը /տեսակային հարստությունը 4: Փորձահրապարակում հավաքագրված տվյալները մանրամասն ներկայացված են Arcgis Survey 123 հավելվածում:

Փորձահրապարակ N E 6- Տարածքում բուսականության ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 86%, խոտաբույսերի մակերեսը 62%, իսկ ծառաբույսերինը՝ մոտ 18%: Մամուռներ՝ 2%, քարառքեր՝ 0%, բաց հողի մակերեսը կազմում է 26%, ժայռեր, քարեր՝ չկան: Ծառաբույսերի միջին բարձրությունը՝ 10մ, խոտաբույսերինը՝ 50սմ: Փորձահրապարակում հանդիպող բոլոր բուսատեսակների թիվը /տեսակային հարստությունը 13: Փորձահրապարակում հավաքագրված տվյալները մանրամասն ներկայացված են Arcgis Survey 123 հավելվածում:

Փորձահրապարակ N E 39 - Խախտված էկոհամակարգ՝ մարդու գործունեության հետևանքով

Փորձահրապարակ N E 33 - Տարածքում բուսականության ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 82%, խոտաբույսերի մակերեսը 24%, իսկ ծառաբույսերինը՝ մոտ 60%: Մամուռներ՝ 10%, քարառքեր՝ 4%, բաց հողի մակերեսը կազմում է 34%, ժայռեր, քարեր՝ 52%: Ծառաբույսերի միջին բարձրությունը՝ 6մ, խոտաբույսերինը՝ 70սմ: Փորձահրապարակում հանդիպող բոլոր բուսատեսակների թիվը /տեսակային հարստությունը 8: Փորձահրապարակում հավաքագրված տվյալները մանրամասն ներկայացված են Arcgis Survey 123 հավելվածում:

Փորձահրապարակ N E 35 -Տարածքում բուսականության ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 50%, խոտաբույսերի մակերեսը 22%, իսկ ծառաբույսերինը՝ մոտ 28%: Մամուռներ՝ 6%, քարառքեր՝ 4%, բաց հողի մակերեսը կազմում է 42%, ժայռեր, քարեր՝ 8%: Ծառաբույսերի միջին բարձրությունը՝ 7մ, խոտաբույսերինը՝ 30սմ: Փորձահրապարակում հանդիպող բոլոր բուսատեսակների թիվը /տեսակային հարստությունը 8: Փորձահրապարակում հավաքագրված տվյալները մանրամասն ներկայացված են Arcgis Survey 123 հավելվածում:



Փորձահրապարակ N E 11 -Տարածքում բուսականության ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 90%, խոտաբույսերի մակերեսը 80%, իսկ ծառաբույսերինը՝ մոտ 10%: Մամուռներ՝ 2%, քարառքեր՝ 2%, բաց հողի մակերեսը կազմում է 16%, ժայռեր, քարեր՝ չկան: Ծառաբույսերի միջին բարձրությունը՝ 8մ, խոտաբույսերինը՝ 60սմ: Փորձահրապարակում հանդիպող բոլոր բուսատեսակների թիվը /տեսակային հարստությունը 13: Փորձահրապարակում հավաքագրված տվյալները մանրամասն ներկայացված են Arcgis Survey 123 հավելվածում:

Փորձահրապարակ N E 14 -Տարածքում բուսականության ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 82%, խոտաբույսերի մակերեսը 52%, իսկ ծառաբույսերինը՝ մոտ 32%: Մամուռներ՝ 8%, քարառքեր՝ 6%, բաց հողի մակերեսը կազմում է 34%, ժայռեր, քարեր՝ 6%: Ծառաբույսերի միջին բարձրությունը՝ 6մ, խոտաբույսերինը՝40: Փորձահրապարակում հանդիպող բոլոր բուսատեսակների թիվը /տեսակային հարստությունը 10: Փորձահրապարակում հավաքագրված տվյալները մանրամասն ներկայացված են Arcgis Survey 123 հավելվածում:

Փորձահրապարակ N E 20-Տարածքում բուսականության ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 90%, խոտաբույսերի մակերեսը 90%, իսկ ծառաբույսեր չկան: Մամուռներ՝ 2%, քարառքեր՝ 4%, բաց հողի մակերեսը կազմում է 10%, ժայռեր, քարեր՝ 4%: Խոտաբույսերինը՝ 70սմ: Փորձահրապարակում հանդիպող բոլոր բուսատեսակների թիվը /տեսակային հարստությունը 11: Փորձահրապարակում հավաքագրված տվյալները մանրամասն ներկայացված են Arcgis Survey 123 հավելվածում:

Փորձահրապարակ N E 24 -Տարածքում բուսականության ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 80%, խոտաբույսերի մակերեսը 60%, իսկ ծառաբույսեր՝ 14 %: Մամուռներ՝ 10%, քարառքեր՝ 2%, բաց հողի մակերեսը կազմում է 18%, ժայռեր, քարեր՝ 4%: Ծառաբույսերի միջին բարձրությունը՝ 6մ, Խոտաբույսերինը՝ 30սմ: Փորձահրապարակում հանդիպող բոլոր բուսատեսակների թիվը /տեսակային հարստությունը 18: Փորձահրապարակում հավաքագրված տվյալները մանրամասն ներկայացված են Arcgis Survey 123 հավելվածում

Փորձահրապարակ N E 25

Տարածքում բուսականության ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 56%, խոտաբույսերի մակերեսը 10-15%, իսկ ծառաբույսեր՝ 40 %: Մամուռներ՝5%, քարառքեր՝ 8%, բաց հողի մակերեսը կազմում է 52%, ժայռեր, քարեր՝ 2%: Փորձահրապարակում հանդիպող բոլոր բուսատեսակների թիվը /տեսակային հարստությունը 5: Ծառաբույսերի միջին բարձրությունը՝

10մ, Խոտաբույսերինը՝ 8-10սմ: Փորձահրապարակում հավաքագրված տվյալները մանրամասն ներկայացված են Arcgis Survey 123 հավելվածում:

Փորձահրապարակ N E 28

Տարածքում բուսականության ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 60%, խոտաբույսերի մակերեսը 15%, իսկ ծառաբույսեր՝ 36 %: Մամուռներ՝ 15 %, քարաոքսեր՝ 5%, բաց հողի մակերեսը կազմում է 54%, ժայռեր, քարեր՝ 2%: Փորձահրապարակում հանդիպող բոլոր բուսատեսակների թիվը /տեսակային հարստությունը՝ 10: Ծառաբույսերի միջին բարձրությունը՝ 10-15մ, Խոտաբույսերինը՝ 7-10սմ: Փորձահրապարակում հավաքագրված տվյալները մանրամասն ներկայացված են Arcgis Survey 123 հավելվածում:

Փորձահրապարակ N E 29

Տարածքում բուսականության ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 50%, խոտաբույսերի մակերեսը 40%, իսկ ծառաբույսեր՝ 10 %: Մամուռներ՝ 8 %, քարաոքսեր՝ 3%, բաց հողի մակերեսը կազմում է 40%, ժայռեր, քարեր՝ 2%: Փորձահրապարակում հանդիպող բոլոր բուսատեսակների թիվը /տեսակային հարստությունը՝ 7: Ծառաբույսերի միջին բարձրությունը՝ 6մ, Խոտաբույսերինը՝ 20 սմ: Փորձահրապարակում հավաքագրված տվյալները մանրամասն ներկայացված են Arcgis Survey 123 հավելվածում:

Փորձահրապարակ N E 26

Տարածքում բուսականության ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 32%, խոտաբույսերի մակերեսը 30-35%, իսկ ծառաբույսեր՝ 2 %: Մամուռներ՝20%, քարաոքսեր՝ 4%, բաց հողի մակերեսը կազմում է 10%, ժայռեր, քարեր՝ 8%: Խոտաբույսերինը՝ 50սմ: Փորձահրապարակում հանդիպող բոլոր բուսատեսակների թիվը /տեսակային հարստությունը՝ 9: Փորձահրապարակում հավաքագրված տվյալները մանրամասն ներկայացված են Arcgis Survey 123 հավելվածում:

Փորձահրապարակ N E 34

Տարածքում բուսականության ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 30%, խոտաբույսերի մակերեսը 36%, իսկ ծառաբույսեր՝ 60 %: Մամուռներ՝ 0%, քարաոքսեր՝ 2%, բաց հողի մակերեսը կազմում է 42%, ժայռեր, քարեր՝ 4%: Ծառաբույսերի միջին բարձրությունը՝ 10մ, Խոտաբույսերինը՝ 30-35սմ: Փորձահրապարակում հանդիպող բոլոր բուսատեսակների թիվը

/տեսակային հարստությունը 5: Փորձահրապարակում հավաքագրված տվյալները մանրամասն ներկայացված են Arcgis Survey 123 հավելվածում:

Փորձահրապարակ N E 36

Տարածքում բուսականության ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 50%, խոտաբույսերի մակերեսը 10%, իսկ ծառաբույսեր՝ 30 % և ավելի: Մամուռներ՝ 8%, քարաոքսեր՝ 5%, բաց հողի մակերեսը կազմում է 42%, ժայռեր, քարեր՝ 32%: Ծառաբույսերի միջին բարձրությունը՝ 8մ, խոտաբույսերինը՝ 30-35սմ: Փորձահրապարակում հանդիպող բոլոր բուսատեսակների թիվը /տեսակային հարստությունը 13: Փորձահրապարակում հավաքագրված տվյալները մանրամասն ներկայացված են Arcgis Survey 123 հավելվածում:

Փորձահրապարակ N E 3

Տարածքում բուսականության ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 94%, խոտաբույսերի մակերեսը 86%, իսկ ծառաբույսեր՝ 10% : Մամուռներ՝ 0%, քարաոքսեր՝ 0%, բաց հողի մակերեսը կազմում է 2%, ժայռեր, քարեր՝ 8%: Ծառաբույսերի միջին բարձրությունը՝ 4մ, խոտաբույսերինը՝ 60սմ: Փորձահրապարակում հանդիպող բոլոր բուսատեսակների թիվը /տեսակային հարստությունը 22: Փորձահրապարակում հավաքագրված տվյալները մանրամասն ներկայացված են Arcgis Survey 123 հավելվածում

Փորձահրապարակ N E 13

Տարածքում բուսականության ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 90%, խոտաբույսերի մակերեսը 12%, իսկ ծառաբույսեր՝ 80% : Մամուռներ՝ 4%, քարաոքսեր՝ 4%, բաց հողի մակերեսը կազմում է 36%, ժայռեր, քարեր՝ 4%: Ծառաբույսերի միջին բարձրությունը՝ 6մ, խոտաբույսերինը՝ 20սմ: Փորձահրապարակում հանդիպող բոլոր բուսատեսակների թիվը /տեսակային հարստությունը 7: Փորձահրապարակում հավաքագրված տվյալները մանրամասն ներկայացված են Arcgis Survey 123 հավելվածում

Փորձահրապարակ N E 12

Տարածքում բուսականության ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 86%, խոտաբույսերի մակերեսը 36%, իսկ ծառաբույսեր՝ 52% : Մամուռներ՝ 2%, քարաոքսեր՝ 4%, բաց հողի մակերեսը կազմում է 18%, ժայռեր, քարեր՝ 4%: Ծառաբույսերի միջին բարձրությունը՝ 6մ, խոտաբույսերինը՝ 60սմ: Փորձահրապարակում հանդիպող բոլոր բուսատեսակների թիվը

/տեսակային հարստությունը 10: Փորձահրապարակում հավաքագրված տվյալները մանրամասն ներկայացված են Arcgis Survey 123 հավելվածում

2025 թվականի ընթացքում մշտադիտարկման շրջանակներում համաձայն ձևաչափի ուսումնասիրություններ են իրականացվել թվով 65 փորձահրապարակներում :



«Դիլիջան» ազգային պարկի «Կովկասյան ազնվացեղ եղջերուի բազմացման կենտրոն»-ի վերաբերյալ տվյալների հավաքագրում

Դիտայցեր են իրականացվել «Կովկասյան ազնվացեղ եղջերուների բազմացման կենտրոն»՝ եղջերուների մոտ կենսաաֆիզոլոգիական փոփոխությունների, արտաքին կառուցվածքի (մազաձածկույթի փոփոխության, եղջյուրների փոխարինման), ինչպես նաև վերարտադրության վերաբերյալ տվյալների հավաքագրման նպատակով: 2025 թվականի ընթացքում կենտրոնում ծվել է 5 ձագ : 2025 թվականի ընթացքում եղջերուների կենտրոնում գրանցվել է եղջերուների 2 առանձնյակի անկում:

2025 թվականի մայիսի 22-ին, Կենսաբազմազանության միջազգային օրվա շրջանակում, Լոռու մարզի Եղեգնուտ գյուղի շրջակա անտառներում բնություն է արձակվել թվով 9 կովկասյան ազնվացեղ եղջերու՝ երրորդ խմբաքանակ: Երևանի կենդանաբանական այգում պահուստային պոպուլյացիայի ստեղծման նպատակով ՀՈԱԿ-ին տրամադրվել է 3 առանձնյակ՝ 1 էգ, 2 արու:



Բույսերի աճի և զարգացման ֆենոլոգիական փուլերի

Ազգային պարկի տարածքում շրջայցերի ընթացքում իրականացվել է ծառաբույսերի աճի և զարգացման հիմնական ֆենոլոգիական փուլերի ուսումնասիրություն և դրանց ընթացքի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում: Դիտարկումները կատարվել են սահմանված մեթոդաբանությամբ՝ յուրաքանչյուր այցելության ընթացքում գրանցելով ինչպես բուսական օբյեկտների, այնպես էլ շրջակա միջավայրի բնութագրերը: Ֆենոլոգիական գրանցամատյանում նշվում են դիտարկման ամիսը և ամսաթիվը, օրվա օդային ջերմաստիճանը, եղանակային պայմանների բնութագիրը, ինչպես նաև տվյալ սեզոնին բնորոշ բուսատեսակների ու կենդանատեսակների ակտիվության, տարածվածության և առաջացող սեզոնային երևույթների վերաբերյալ տվյալներ: Բույսերի ֆենոլոգիական ուսումնասիրությունների ընթացքում առանձնացվում և փաստագրվում են զարգացման հաջորդական սեզոնային փուլերը, այդ թվում՝ բողբոջի ուռչում, բողբոջաբացում, տերևակալում, ծաղկման սկիզբ և ավարտ, պտուղների ձևավորում և հասունացում, սերմերի վերջնական հասունացում, աշնանային գունավորում, տերևաթափ: Հավաքագրված տվյալները հնարավորություն են տալիս գնահատելու ծառատեսակների կենսաֆենոլոգիական դինամիկան, որոշելու սեզոնային փուլերի տևողությունները, ինչպես նաև վերլուծելու արտաքին միջավայրի՝ հատկապես կլիմայական պայմանների ազդեցությունը բույսերի զարգացման վրա: Ֆենոլոգիական տեղեկատվությունը կարևոր հիմք է ծառատեսակների կենսաբանական առանձնահատկությունների ուսումնասիրության, աճելավայրերի վիճակի դիտարկման, ինչպես նաև էկոլոգիական և կլիմայական փոփոխությունների բացահայտման համար:





Հիմնական անտառակազմող և վայրի մրգաբույս ծառաբույսերի պարզացման սեզոնային ֆենոլոգիական փուլերի դիֆարենան պվայներ 2025 թվական

№	Բույսի անվանումը	Բողբոջներ		Տերևակալում		Ծաղիկ		Պտղի	Տերևաթափ		Կենսաֆենոլոգիա
		Բողբոջաուղում	Բողբոջաբաց	Սկիզբ	Ավարտ	Սկիզբ	Ավարտ	Սերմերի հասունացում	Սկիզբ	Ավարտ	
								Հասունացում			Ընդհանուր շրջան
1	Հոնի	10 + 7/03	18+ 7/03	25+ 7/04	19+ 7/05	09+ 7/04	21 + 7/04	25+ 7/09	10+ 7/10	22 + 7/10	112 + 7 օր
2	Բոխի	25 + 7/04	10 + 7/05	17 + 7/04	29 + 7/05	17 + 7/05	25 + 7/05	23+ 7/09	15+ 7/10	18+ 7/11	138 + 7 օր
3	Հաճարենի	02 + 7/04	16 + 7/04	12 + 7/05	21 + 7/05	15 + 7/05	25 + 7/05	20 + 7/10	19 + 7/10	20 + 7/11	142 + 7 օր
4	Սալոր	07 + 7/03	28 + 7/03	17+ 7/ 04	25 + 7/04	05+ 7/04	19+ 7/04	15+ 7/09	10 + 7/10	05+ 7/11	121 + 7 օր
5	Կաղնի	01 +7/04	07 + 7/05	12 + 7/05	28 + /05	04 + 7/06	26 + 7/06	10+ 7/10	20+ 7/10	24 + 7/11	147 + 7 օր
6	Տանձենի	07 + 7/04	15 + 7/04	26 + 7/04	12 + /05	10 + 7/05	28 + 7/05	17 + 7/10	12+ 7/10	20 + 7/11	137 + 7 օր
7	Խնձորենի	24 + 7/03	10 + 7/04	21 + 7/04	30 + /04	05 + 7/05	16 + 7/05	10 + 7/10	22 + 7/10	13 + 7/11	113 + 7 օր
8	Ընկուզենի	11 + 7 /04	25 + 7/04	16 + 7/05	07 +7/06	18 + 7/04	30 + 7/04	21 + 7/10	20+ 7/10	20 + 7/11	132 + 7 օր

Էկոկրթական, ճանաչողական, դասընթաց – սեմինարների իրականացում ուսումնական հաստատությունների սաների, էկոխմբակների համար

Թեղուտի միջնակարգ դպրոց / մասնակիցների թիվը 33/

Բնապահպանական կրթության, շրջակա միջավայրի մասին գիտելիքների ձեռքբերման, բնապահպանական գործունեության հմտությունների և ընդհանուր բնապահպանական մշակույթի ձևավորման նպատակով «Դիլիջան» ազգային պարկի գիտության, մշտադիտարկման և զբոսաշրջության բաժնի աշխատակիցներն այցելել են Դիլիջան համայնքի Թեղուտի միջնակարգ դպրոց: Դպրոցի 5-րդ դասարանի աշակերտների համար աշխատակիցներն աշակերտներին ներկայացրել են հետևյալ բնապահպանական թեմաներով դասընթաց-քննարկում.

- ✓ «Անտառների դերն ու կարևորությունը, Ծառահատումների հետևանքները»
- ✓ «Անտառները մարդկանց համար, թե՛ մարդիկ անտառների...»



Դիլիջանի թիվ 2 հիմնական դպրոց / 30 մասնակից /

«Դիլիջան» ազգային պարկ ՊՈԱԿ-ի գիտական բաժնի աշխատակիցներն այցելել են Դիլիջանի թիվ 2 հիմնական դպրոց: Այցելության շրջանակներում 8-9-րդ դասարանների աշակերտների համար կազմակերպել և ներկայացրել են ինտերակտիվ, բնապահպանական, էկոկրթական դասընթաց սեմինարներ, հագեցած գիտելիքների ստուգման խաղերով, որի շրջանակներում ներկայացվել են հետևյալ թեմաներով սահապատկերներ.

- ✓ «Դիլիջան» ազգային պարկի կենսաբազմազանությունը,
- ✓ «Կարմիր գրքային տեսակները մեր պաշտպանության կարիքն ունեն»



- ✓ ԴԱՊ-ի էկոտուրիստական հնարավորությունները, զարգացման ուղղությունները ինչպես նաև աշակերտները ծանոթացել են վրանների և քնապարկերի օգտագործման կանոններին:



Խաչարձանի միջնակարգ դպրոց / մասնակիցների թիվը 20 /

«Դիլիջան» ազգային պարկ ՊՈԱԿ-ի գիտության, մշտադիտարկման և զբոսաշրջության բաժնի աշխատակիցներն այցելել են Դիլիջան համայնքի Խաչարձանի միջնակարգ դպրոց: 8-9-րդ դասարանների աշակերտների համար իրականացվել է ինտերակտիվ էկոկրթական սեմինար հետևյալ թեմաներով՝

- ✓ Անտառ, ծառահատումներ և դրանց հետևանքները
- ✓ ՀՀ Կարմիր գիրք: Կարմիր գրքային տեսակները «Դիլիջան» ազգային պարկում
- ✓ «Դիլիջան» ազգային պարկի էկոտուրիստական հնարավորությունները, հետագա զարգացման ուղղությունները
- ✓ Հանդիպման ավարտին մասնակիցների հետ գիտելիքների ամրապնդման նպատակով իրականացվել է հիշողության և բնապահպանական խաղ, հարցեր:



Դիլիջանի Վ.Անանյանի անվան միջնակարգ դպրոց / մասնակիցների թիվը 33 /

«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի գիտության բաժնի աշխատակիցները Դիլիջանի Վ.Անանյանի անվան միջնակարգ դպրոցի 6-րդ դասարանի աշակերտների համար անց են կացրել ինտերակտիվ դասընթաց-քննարկում հետևյալ թեմաներով.

- ✓ «Վայրի բնության ապագան մեր ձեռքերում է»
- ✓ «Դիլիջան» ազգային պարկի կենսաբազմազանությունը, կարմիր գրքային տեսակները, դրանց պահպանության և պաշտպանության անհրաժեշտությունը:
- ✓ «Մարդ – բնություն փոխհարաբերություն»



Դիլիջանի համար վեց հիմնական դպրոց / մասնակիցների թիվը 25 /

Բնության նկատմամբ բարեխնամ վերաբերմունքի ձևավորման նպատակով «Դիլիջան» ազգային պարկ ՊՈԱԿ-ի գիտական բաժնի աշխատակիցների կողմից, Դիլիջանի համար վեց հիմնական դպրոցի 5-7-րդ դասարանների աշակերտների համար կազմակերպվել է դասընթաց հետևյալ թեմաներով՝

- ✓ «Վայրի բնության պահպանության կարևորությունը»
- ✓ «Դիլիջան» ազգային պարկի էկոտուրիստական հնարավորությունները և էկոտուրիստական գույքից օգտվելու կանոնները:



Դիլիջանի Վ.Անանյանի անվան միջնակարգ դպրոց / մասնակիցների թիվը 27 /

Վաղ տարիքում շրջակա միջավայրի նկատմամբ հոգատար վերաբերմունքի զարգացման և էկոդաստիարակության ձևավորման նպատակով «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի գիտության բաժնի աշխատակիցները Դիլիջանի Վ.Անանյանի անվան միջնակարգ դպրոցի 2-րդ դասարանի աշակերտների համար անց են կացրել բաց դաս՝ «Դիլիջան» ազգային պարկի բուսական, կենդանական աշխարհի և առեղծվածային սնկերի բացահայտման նպատակով:

Դասընթաց-քննարկման շրջանակներում հաշվի առնելով աշակերտների տարիքային առանձնահատկությունները սահապատկերների միջոցով ներկայացվել է ազգային պարկի կենսաբազմազանությունը, խոսվել է կարմիր գրքային տեսակների, բնության մեջ մարդու վարվելականոնների և բնության պահպանության կարևորության մասին:



ԵՊՀ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի, ընդհանուր աշխարհագրության ամբիոն / մասնակիցների թիվը 36/

Մարտի 20-ին Անտառների միջազգային օրվան ընդառաջ, «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի այցելուների կենտրոնում հյուրընկալվել էին ԵՊՀ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի, Ընդհանուր աշխարհագրության ամբիոնի 3-րդ և մագիստրատուրայի 1-ին կուրսի, Սերվիսի ամբիոնի 3-րդ կուրսի, Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի 2-րդ և 3-րդ կուրսի ուսանողներ, այդ թվում Ընդհանուր աշխարհագրության ամբիոնի դոցենտներ Վարդուհի Մարգարյանը, Կամո Ալեքսանյանը և Արևմտյան Ուկրաինայի համալսարանի Երեվանի կրթագիտական ինստիտուտի դոցենտ Արմեն Սեդրակյանը:

Ուսանողների հետ կենտրոն էին այցելել նաև արտերկրից (Ֆրանսիայից, Գերմանիայից, Ռուսաստանից) ժամանած գիտնականներ, ովքեր եկել էին մասնակցելու անտառագետի, ջրաբանի և օդերևութաբանի մասնագիտական օրվա առիթով ԵՊՀ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետում մարտի 21-22-ին կազմակերպվող «Հիդրոօդերևութաբանության և շրջակա միջավայրի մոնիթորինգի արդի հիմնախնդիրները փոփոխվող կլիմայի պայմաններում. հարմարվողականություն, կայունություն և արտադրական գործընթաց» խորագրով միջազգային գիտաժողովին:

Գիտության բաժնի աշխատակիցների կողմից մասնակիցների համար անց է կացվել գիտաճանաչողական սեմինար հետևյալ թեմաներով՝

- ✓ «Դիլիջան» ազգային պարկը, որպես բնության հատուկ պահպանվող տարածք
- ✓ «Դիլիջան» ազգային պարկի կենսաբազմազանությունը, կարմիր գրքային տեսակները, Հանդիպման ընթացքում խմբի համար փորձնականում կիրառվել է ծառերի տարիքաչափը և ներկայացվել դրա օգտագործման ձևը: Հանդիպումն ամփոփվել է հյուրերի «Ազնվացեղ եղջերուների բազմացման կենտրոն» այցելությամբ:





Դիլիջանի թիվ 4 դպրոց / մասնակիցների թիվը 29 /

Անտառների միջազգային օրվա տոնին նվիրված «Դիլիջան» ազգային պարկի գիտական բաժնի աշխատակիցները Դիլիջանի թիվ 4 դպրոցի էկոխմբակի անդամների և 9-րդ դասարանի աշակերտների համար կազմակերպել են «Անտառների պահպանությունը մեր ձեռքերում է և ես պատասխանատու եմ անգամ մեկ ծառի համար» թեմայով բնապահպանական դասընթաց-միջոցառում:

- ✓ Սահապատկերի միջոցով ներկայացվել է անտառների դերն ու պահպանությունը:
- ✓ Մասնակիցներից ձևավորվել են թիմեր և ներկայացվել է խմբային ձևաչափով ստեղծագործական աշխատանքի ներկայացման թեման:
- ✓ Աշակերտներից ձևավորված յուրաքանչյուր խումբ գործնական աշխատանքի միջոցով ներկայացրել է «Ես պատասխանատու եմ անտառի պահպանության համար, քանի որ...» թեմատիկ պաստառ:
- ✓ Թիմային աշխատանքի շրջանակներում աշակերտների հետ համատեղ պատրաստվել է բնապահպանական պաստառ նվիրված այսօրվա բնապահպանական տոնին և յուրաքանչյուր աշակերտ արտահայտել է իր առաջարկություններն ու մտահոգությունները:



Արմաշի Մաղաքիա Օրմանյանի անվան և Երասխի միջնակարգ դպրոցներ

/ մասնակիցների թիվը 36 /

Թոշունների միջազգային օրվան ընդառաջ «Դիլիջան» ազգային պարկի գիտական բաժնի աշխատակիցներն Արմաշի Մաղաքիա Օրմանյանի անվան և Երասխի միջնակարգ դպրոցների 5-9-րդ դասարանների աշակերտների համար կազմակերպել և անց են կացրել բաց դաս – միջոցառում հետևյալ թեմաներով.

- ✓ «Անտառի բնակիչների պահպանությունն ու պաշտպանությունը մեր պարտականությունն է»
- ✓ «Դիլիջան» ազգային պարկի անտառներն ու նրա բնակիչները
- ✓ «Անտառներում մարդու վարվելականոնները»

Միջոցառման շրջանակներում աշակերտները ներկայացրել են իրենց կողմից հավաքագրված, անտառների և նրա բնակիչների մասին հետաքրքրաշարժ նյութեր և վարչական շենքի հարակից տարածքում, բնապահպանական դասընթացների համար նախատեսված տաղավարի հարակից տարածքում տեղադրել են իրենց ձեռքերով պատրաստված թռչնաբներ և կերեր:



Գուգարքի Հ. Շիրազի անվան ավագ դպրոց / մասնակիցների թիվը 28 /

«Դիլիջան» ազգային պարկ ՊՈԱԿ-ի գիտական բաժնի աշխատակիցները Լոռվա մարզի Գուգարքի Հ. Շիրազի անվան ավագ դպրոցի 11-12-րդ դասարանների աշակերտների համար անց են կացրել ինտերակտիվ, բնապահպանական, էկոլոթական դասընթաց սեմինարներ, հագեցած գիտելիքների ստուգման խաղերով, որի շրջանակներում ներկայացվել են հետևյալ թեմաներով սահապատկերներ.



- ✓ «Դիլիջան» ազգային պարկի կենսաբազմազանությունը,
- ✓ «Կարմիր գրքային տեսակները մեր պաշտպանության կարիքն ունեն»
- ✓ ԴԱՊ-ի էկոտորիստական հնարավորությունները, զարգացման ուղղությունները, ինչպես նաև աշակերտները ծանոթացել են վրանների և քնապարկերի օգտագործման կանոններին:



Վանաձորի թիվ 8 հիմնական դպրոցի, «Պատանի բնագետ» խմբակ

/ մասնակիցների թիվը 23 /

«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի այցելուների կենտրոնում հյուրընկալվել են Վանաձորի թիվ 8 հիմնական դպրոցի, «Պատանի բնագետ» խմբակի աշակերտները: Գիտական բաժնի աշխատակիցներն աշակերտների համար անց են կացրել ինտերակտիվ խաղերով հագեցած էկոլոգիական դասընթաց հետևյալ թեմաներով

- ✓ «Դիլիջան» ազգային պարկի ընդհանուր բնութագիրը, կենսաբազմազանությունը,
- ✓ «Կարմիր գրքային տեսակները»
- ✓ ԴԱՊ-ի էկոտորիստական հնարավորությունները, զարգացման ուղղությունները, ինչպես նաև աշակերտները ծանոթացել են էկոտորիստական գույքի օգտագործման կանոններին:

Աշակերտները մասնագետի օգնությամբ կիրառել են ծառերի տարիքաչափը և որոշել ծառի տարիքը: Գիտելիքների ամրապնդման նպատակով հարց ու պատասխանի միջոցով քննարկվել է աշակերտներին հետաքրքրող հարցերը: Դասընթացի մասնակիցները այցելել են նաև եղջերուների կենտրոն:





Կոտայքի մարզի Արզնիի Սերգեյ Սարխոշևի անվան միջնակարգ դպրոցի աշակերտներ / մասնակիցների թիվը 28 /

«Երկրի օր» բնապահպանական տոնի շրջանակներում, «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի գիտական բաժնի աշխատակիցները Կոտայքի մարզի Արզնիի Սերգեյ Սարխոշևի անվան միջնակարգ դպրոցի 7-րդ դասարանի աշակերտների համար անց են կացրել ինտերակտիվ խաղերով հագեցած էկոլոթական դասընթաց հետևյալ թեմաներով

- ✓ «Դիլիջան» ազգային պարկի կենսաբազմազանության պահպանության կարևորությունը մոլորակի համար
- ✓ «Կարմիր գրքային տեսակները»
- ✓ ԴԱՊ-ի էկոտուրիստական հնարավորությունները, զարգացման ուղղությունները: Դասընթացն ամփոփվել է «Ազնվացեղ եղջերուների բազմացման կենտրոն» այցելությամբ





Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) Շրջակա միջավայր և կայունության գիտություններ բակալավրիատի ուսանողներ /մասնակիցների թիվը 19/

«Կենսաբանություն էկոհամակարգեր» առարկայի շրջանակներում՝ ճանաչողական այցով Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) Շրջակա միջավայր և կայունության գիտություններ բակալավրիատի ուսանողները, կ.գ.դ. դասախոս Արսեն Գասպարյանի ուղեկցությամբ այցելել են «Դիլիջան» ազգային պարկ:

Գիտական բաժնի աշխատակիցները հանդիպան շրջանակներում ուսանողներին ծանոթացրել են ազգային պարկի կառուցվածքին, կենսաբազմազանությանը և էկոհամակարգերին, կառավարման նպատակներին, առկա մարտահրավերներին, կենսաբազմազանության մշտադիտարկման ծրագրերին և այլն:



Սարիգյուղի Համլետ Աթաբեկյանի անվան միջնակարգ դպրոց / մասնակիցների թիվը 20 /

Հայաստանի աշխարհագրություն և կենսաբանություն առարկաներից, ՀՀ ԲՀՊՏ-ների մասին նախագծային աշխատանքի իրականացման շրջանակներում «Դիլիջան» ազգային պարկ» են այցելել Սարիգյուղի Համլետ Աթաբեկյանի անվան միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանի աշակերտները:

✓ Գիտական բաժնի աշխատակիցները հանդիպման շրջանակներում սահապատկերների, դիտակտիկ նյութերի միջոցով աշակերտներին ծանոթացրել են ազգային պարկի կառուցվածքին, գործունեությանը, կենսաբազմազանությանը և Կարմիր գրքային տեսակներին: Ինչպես նաև ներկայացվել է ԴԱՊ-ի էկոտուրիստական հնարավորությունները, զարգացման ուղղությունները:

✓ Դասընթացն ամփոփվել է աշակերտների «Ազնվացեղ եղջերուների բազմացման կենտրոն» այցելությամբ:



Դիլիջանի թիվ 2 հիմնական դպրոցի 9-րդ դասարանի աշակերտներ / մասնակիցների թիվը 12 /

Հայաստանի աշխարհագրություն առարկայից, ՀՀ ԲՀՊՏ-ների մասին նախագծային աշխատանքի իրականացման շրջանակներում «Դիլիջան» ազգային պարկ» են այցելել Դիլիջանի թիվ 2 հիմնական դպրոցի 9-րդ դասարանի աշակերտները:

✓ Գիտական բաժնի աշխատակիցները հանդիպման շրջանակներում սահապատկերների, դիտակտիկ նյութերի միջոցով աշակերտներին ծանոթացրել են

ազգային պարկի կառուցվածքին, գործունեությանը, կենսաբազմազանությանը և Կարմիր գրքային տեսակներին:

✓ Դասընթացն ամփոփվել է աշակերտների «Ազնվացեղ եղջերուների բազմացման կենտրոն» այցելությամբ:



Դիլիջանի թիվ 4 դպրոցի 9-րդ դասարանի աշակերտները և էկոխմբակի անդամները «Դիլիջան» ազգային պարկում / մասնակիցների թիվը 20 /

«Դիլիջան» ազգային պարկ են այցելել Դիլիջանի թիվ 4 հիմնական դպրոցի 9-րդ դասարանի աշակերտները և էկոխմբակի անդամները: Աշխարհագրություն առարկայից նախագծային աշխատանքի իրականացման շրջանակներում աշակերտները ծանոթացել են ազգային պարկի կենսաբազմազանությանը, կարմիր գրքային տեսակներին, ազգային պարկի գործունեությանը, կառուցվածքին և նպատակին: Այցելության շրջանակներում արշավ է իրականացվել դեպի Կենու պուրակ: Արգելոցային հատվածում աշակերտներին ներկայացվել է տեղեկատվություն՝ կենի ծառաբույսի, փորձահրապարակի, Աղավնավանքի վերաբերյալ: Աշակերտների կողմից հավաքվել են նմուշներ և նյութեր, որոնք կներկայացվեն նախագծային աշխատանքի շրջանակներում:



Դիլիջանի կենտրոնական դպրոց (Այբ) / մասնակիցների թիվը 3 /

8-րդ դասարանի աշակերտները Հասարակագիտություն առարկայից «Բնապահպանություն» թեմայով նախագծային աշխատանքի իրականացման շրջանակներում այցելել են «Դիլիջան» ազգային պարկ: Նախագծային աշխատանքների իրականացման շրջանակներում աշակերտների կողմից կազմված հարցաթերթիկներին պատասխանել են անտառագետները:



Դիլիջանի թիվ 4 հիմնական դպրոցի 2-րդ Բ դասարանի աշակերտներ / մասնակիցների թիվը 24/


Կենսաբազմազանության միջազգային օրվան նվիրված միջոցառումների և դասընթացների շրջանակներում «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի այցելուների կենտրոնում հյուրընկալվել են Դիլիջանի թիվ 4 հիմնական դպրոցի 2-րդ Բ դասարանի աշակերտները: Աշակերտների համար անց է կացվել ինտերակտիվ դասընթաց-քննարկում,

որի շրջանակներում սահապատկերների միջոցով ներկայացվել է «Դիլիջան» ազգային պարկի կենսաբազմազանությունը՝ բուսական, կենդանական աշխարհը և զարմանահրաշ սնկերը: Ինչպես նաև աշակերտները ծանոթացել են ՀՀ Բույսերի և Կենդանիների Կարմիր գրքին, նրանում գրանցված տեսակներին, հերբարիումային նմուշներին: Աշակերտները թոչնաբներ են նվիրել ազգային պարկին, որոնք տեղադրվել են տարբեր հատվածներում:



«Արթիկի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոն / մասնակիցների թիվը 23/

Կենսաբազմազանության միջազգային օրվա շրջանակներում «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի այցելուների կենտրոնում հյուրընկալվել են «Արթիկի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի սաները: Այցելուների համար անց է կացվել ինտերակտիվ դասընթաց-քննարկում, որի շրջանակներում սահապատկերների միջոցով ներկայացվել է «Դիլիջան» ազգային պարկի կենսաբազմազանությունը՝ բուսական, կենդանական աշխարհը և զարմանահրաշ սնկերը: Դասընթացի վերջում «Արթիկի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի սաներն օրն ամփոփվել է «Ազնվացեղ եղջերուների կենտրոն» այցելությամբ:



Հուլիսի Կամուրջ / Դիլիջան ՀԿ-ի սաներ / մասնակիցների թիվը 12/

Շրջակա միջավայրի միջազգային օրվա շրջանակներում «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի աշխատակիցների ուղեկցությամբ Դիլիջան խոշորացված համայնքում գործող Հուլիսի Կամուրջ / Դիլիջան ՀԿ-ի սաներն այցելել են Ազնվացեղ եղջերուների բազմացման կենտրոն: «Հուլիսի կամուրջ» ՀԿ-ի սաներն այցելության շրջանակներում մասնակից են դարձել եղջերուների կերակրման գործընթացին և ծանոթացել կարմիր գրքային տեսակին: Կարևորվել է մարդ-բնություն կապը և երեխաների մոտ բնապահպանական կրթության բարձր մակարդակի ձևավորումը:





«Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» (ԵՆԿ) հասարակական կազմակերպության և «Green Me» միջազգային երիտասարդական փոխանակումը բնապահպանության և ակտիվ քաղաքացիության թեմայով ծրագիրը ԴԱՊ-ում / մասնակիցների թիվը 28/

«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի գիտական բաժնի աշխատակիցները հյուրընկալել են Եվրամիության Էրազմուս+ ծրագրի շրջանակներում «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» (ԵՆԿ) հասարակական կազմակերպության և «Green Me» միջազգային երիտասարդական փոխանակումը՝ բնապահպանության և ակտիվ քաղաքացիության թեմայով ծրագրի շրջանակներում Հայաստանից և Լեհաստանից ժամանած 16-18 տարեկան պատանիներին և արշավ կազմակերպել դեպի «Կովկասյան ազնվացեղ եղջերուների բազմացման կենտրոն»:

- ✓ Ոչ-ֆորմալ միջավայրում ազնվացեղ եղջերուների կենտրոնում մասնակիցները ծանոթացել են Կարմիր գրքային տեսակին և կենտրոնի գործունեության նպատակին:
- ✓ Արշավականներն այցելել են նաև Պարզ լիճ:
- ✓ Արշավի մասնակիցների հետ համատեղ իրականացվել է թեյերի պատաստման համար օգտագործվող բույսերի հավաք, որի շրջանակներում էլ ծանոթացել են բնության մեջ բույսերի հավաքման կանոններին և ճիշտ ժամանակահատվածին:





«Դիլիջան ազգային պարկ ՊՈԱԿ-ի Էկոխմբակի ձևավորում /մասնակիցների թիվը 27/

2025 թվականի ընթացքում Դիլիջան համայնքի ուսումնական հաստատությունների տարբեր տարիքային խմբի աշակերտներից, սեփական դիմումի համաձայն ձևավորվել է Էկոխմբակ: Սույն թվականի հունիսի 27-ին տեղի է ունեցել «Դիլիջան ազգային պարկ ՊՈԱԿ-ի Էկոխմբակի սաների առաջին հանդիպումը:

- ✓ Գիտական բաժնի աշխատակիցները հանդիպման շրջանակներում մասնակիցներին ներկայացրել են ազգային պարկի գործունեությունը, նպատակը, կենսաբազմազանությունը:
- ✓ Էկոխմբակի անդամները ծանոթացել են միմյանց հետ, սաներից յուրաքանչյուրը ներկայացրել է իր հետաքրքրասիրություններն ու պատկերացումները խմբակի գործունեության մասին:
- ✓ Ոչ ֆորմալ ձևաչափով սաները քննարկել են Էկոխմբակի հետագա գործունեությունը:
- ✓ Որոշվեց հաջորդ հանդիպման շրջանակներում քվեարկության միջոցով ընտրել Էկոխմբակի անվանումն ու տարբերանշանը:
- ✓ Խոսվել է հաջորդ հանդիպման մասին, որն իրենից ենթադրում է որևէ բնապահպանական նախաձեռնություն:
- ✓ Հանդիպման ավարտին Էկոխմբակի անդամները խաղացել են բնապահպանական մոտեցումներով ներկայացված ժամանցային խաղեր:





«Դիլիջան ազգային պարկ ՊՈԱԿ-ի Էկոխմբակի մասնակցությամբ թռչնաբների տեղադրման և շրջակա միջավայրի մաքրման աշխատանքներ /մասնակիցների թիվը 15/

«Դիլիջան» ազգային պարկի էկոակումբի սաները մասնակցել են շրջակա միջավայրի մաքրման և թռչնաբների տեղադրման աշխատանքներին:

Ակցիայի ընթացքում հավաքվել է «Կովկասյան ազնվացեղ եղջերուների բազմացման կենտրոն»-ի հարակից տարածքում առկա կենցաղային թափոնների մի մասը՝ նպաստելով անտառային միջավայրի պահպանությանը և մաքուր էկոհամակարգի ձևավորմանը:

